

2491

bngag46ug8

1-2
91

runus

Qus4u87uzsnpgug

PhSLHU

1911

203.7

5-66

17 SEP 2009

Գրայիւս քաղաքացիութեան

Յաջմանը 1912 Խ/Տ.

3-62

ՈՒՍՈՒՄՆ

ԱՄՏՈՒԱԾՊԱՇՏՈՒԹԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅԱ ԱՌԱՔԵԼԱԿՈՆ Ս. ԵԿԵ-

203.7

5-66.

ՂԵՑՈՒ



ՀԱՄԱՊՈՅ ԴԱՍՏԳԻՐԲ

(Պատկերազարդ)

Կ Ա Զ Ա Տ Տ Յ

ԴՐԻԴՈՐԻԾ ԱԻԱԴ ՔԱՀԱՆԱՅ ԵՐԶԵԿԵԱՆՑ

Թօնուառուց Տիբիսի Նորին Կարսերական Բարձրութեան Մեծ Խշան Միհայիլ
Նիկոլայեցի արական երկրորդ Գիմնազիոնի:

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ:

Թ Ա Ֆ Լ Ի Ա

ՏՊԱՐԱՆ ՎՐԱՅ ՀՐԱՄԱՆԱԿԱՆ ԸՆԿ.

1911

203

5-66

10 APR 2013

2491

W b P n h Q b Us

Մեր Հայ-Քրիստոնէական Եկեղեցու Աստուածպաշտութեան սահմանած և որբագործուած ամեն մի գործողութիւն, կարգ, ընթերցուած, երգ և աղօթք իրանց խորհրդաւոր նշանակութիւնը ունին, մանաւանդ որ Քրիստոնէութիւնը մի այնպիսի անփոխարինելի ընտիր Ուսում է, Որի միակ նպատակն է կը հետեւողներին միայն բարոյական վսիմ եւ ազնիւ պատգամներ աւանդել, և դոցա համեմատ՝ դաստիարակել: Ուստի՝ այդ Ուսման ամենաիրական մասի, այն է՝ Աստուածպաշտութեան իւրացնելը մեր կրթող քրիստոնեայ մատաղ սերնդի համար պէտք է անհրաժեշտ պարտականութիւն համարուի:

Գործը կանոնաւոր հիմքի վերայ հաստատելու նպատակով՝
մենք այս համաւոտ դասագիրքը կազմեցինք, որի մէջ ամեն տեսակ
գիրութիւններ առաջ բերինք և բացարութիւնները այնպիսի պարզ
գատողութիւններով շարահիւսեցինք, որոնք մեր ու Եկեղեցու ո-
գուն *) ընաւին խորթ չեն:

Մնում է միայն յարդելի կրօնուսոցներին՝ սրբ այս կամաց պատճենը՝ մեծ օգուտ կ'ստանան՝ ինարկից օգտութիւն՝ որից՝ անհամեմատ՝ մեծ օգուտ կ'ստանան՝ նպաստ իրանց կրօնա-բարոյական գաստիարակութեանն յանձնուած կրթւող երկսեռ մատաղ սեբնդի, եթէ յենուին անշուշտ վերջիններիս աստիճանական զարգացման վերայ և անցնեն նոցա թիշքիշ եւ հիմնաւոր, քան թէ շատ-շատ, ըայց անհիմն-կցկուուր:

Կարճ ժամանակում առաջին տպագրությունը հեղանք, որի մէջ հետո-
մենք երկրորդ տպագրութեանը ձեռնամուխ եղանք, և առաջինը՝ նորութիւնը մտցրինք:


Թէ հոգեոր և թէ պետական միջնակարգ դպրոցներին պարզապետութին դասով, անցնուում է և՝ «Քրիստոնէական» վարդապետութիւնը:

Սահմանը՝ 3
Մարտի 1918 թվականի 1-ին՝ «Ասուլածաշունչ» և Գիրք Հին և Նոր
Կառավարանների. 2)՝ Հայ-Եկեղեցական գրականութիւն, և 3)՝ Հայկական կանոնադրութիւն»—մեր։

Թոյլ տամբ տպագրել զդասագիրս: «ՀՀ» Յունուարի
1909 ամի ՚ի Ս. Էջմիածին:

Տեղակալ կաթուղիկոսի ամենայն Հայոց՝
Գլուրդ. Արքեպիսկոպոս ՍՈՒՐԵՆԻՆԵԱՆ:

ԿԱՐԵ



2008-99

Q0-99

2000-911

թիւն»։ միայն պէտք է խոստովանած, որ դա խիստ վերացական կերպով է աւանդուում, մանաւանդ որ հէնց ինքը, առարկան էլ, նոյն յատկութիւնն ունի:

Խելացի Մանկավարժութիւնը պահանջում է դորա դասաւանդման մէջ ևս «կենդանութիւն» մացնել, որը փառաւոր կերպով գլուխ կը դայ միայն Աստուածապաշտութեամբ, որովհետև վերջինս՝ խակապէս՝ ոչ այլ ինչ է, եթէ ոչ՝ առաջինի հոգու արտայայտութեան արտաքինս նշան. ուստի անհրաժեշտ կարիք կայ հոգեկան ներքին գործունէութեան հետ «արտաքինը» ևս կապել, հիւսել և միացնել. հակառակ դէպքում՝ դոքա երկուքն էլ միշտ «չոր ու ցամաք» կ'մնան:

Մեր ներկայ ուղղութեամբ, առարկան հետաքրքիր և արդիւնաէտ կացուցանելու նպատակով, երկու տարուայ ընթացքում, «Աստուածապաշտութեան» հետ զուգընթացաբար, այն էլ եկեղեցու և ժողովրդի պատմական կեանքի թէ սրտամորմոք և թէ ուրախալից ընդհանուր և անհրաժեշտ «ըոպէներբ» ամփոփ կցելով, պէտք է անցնել և՝ չՔիստոնէական վարդապետութիւնը», որի աւանդումն եթէ առաջինից «զատենք» և առանձին դասով անցնենք, —դա հաւասարազօր կ'ինչ այն «տիմուր» հանգամանքին, որ մենք առարկայի դասաւանդումը իրական և դիւրամշակ հողի վերայ չենք կամենում հաստատուած տեսնել:

Մեր առաջարկած ծրագիրը յաջողութեամբ իրագործում ենք Տփխիսի արական երկրորդ «Գիմնազիօնում», ուր հայ աշակերաները մեր դասերը շահաւէտ հետաքրքրութեամբ են լսում և իւրացնում:

Սոյնը մեր պաշտօնակից հոգեսոր եղբայրներին ենք առաջարկում փորձել, մանաւանդ որ այստեղ աւած են բերուած այն բոլոր կարեսը նիւթերը, որոնք ամեն մի անկեղծ Հայի ամբողջ կեանքում անշուշտ նորա «յիշողութեան» մէջ միշտ կ'մնան, հեռու աւելորդ մանրամասնութիւններից: Թերութիւնների մասին արած նկատողութիւնները չնորհակալութեամբ կ'ընդունենք:

Դրիգորիս աւագ քահանայ Երզնկեանց
(Միաբան Տփխիսի օգրկինեանց ու Կարապետ Եկեղեցու):

21-ն Յունուարի 1911 ամի.
Տփխիս:

ՈՒՍՈՒՄՆ ԱՍՏՈՒԱԾՊԱՇՏՈՒԹԵԱՆ ՀԱՅԿԱԿՈՆ Ա. ԵԿԵՂԵՑՈՒ:

Ա. Ա. Զ Ի Ն Տ Ա Ր Ի.

ՍԿՃԲՆԱԿԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ:

ԱՍՏՈՒԱԾՊԱՇՏՈՒԹԵԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆ, ՏԵՍԱԿԱՆԵՐ, ԵՒ ԾԱԳՈՒՄԸ:

Այն բոլոր աղօթքները, երգեցզութիւնները, ընթերցուածները և սրբազն արարողութիւնները, որոնցով մեր Հայ-քրիստոնէանները Աստծուն պաշտում—ծառայութիւն են մատուցանում, իրանց «Հաւատար», «Յոյսը» և «Սէրը» անորան արտայայտում և, ազնիւ ու անարատ կեանք վարելու համար, նորանից շնորհատու ոյժ և կարողութիւն ստանում,—«Աստուածապաշտութիւն» են անուանում:

Աստուածապաշտութիւնը լինում է—1) «Մասնաւոր», երբ կատարում է «մասնաւոր» կերպով՝ կամ մէկ, կամ մի քանի մարդոց միջոցով, և 2) «Հասարակական», երբ մի քանի մարդոց միջոցով, և 3) «Ամբողջ Եկեղեցու» կողմից նշանակուած հոգեսոր «պաշտը» «ամբողջ Եկեղեցու» կողմից նշանակուած հոգեսոր «0գաշտը» տոնենեներն» են հանդիսանում և բոլոր հաւատացողների փրկութեան համար Աստծու անհրաժեշտ «0գաշտը» ու «Շնորհքը» ինսդրում:

Հասարակական Աստուածապաշտութիւնն էլ բազկանում է—1) «Մշտական» Եկեղեցական ժամերգութիւններից, մընք բոլոր քրիստոնէանների համար որոշ ժամանակնե-

բումն են կատարւում, օրինակ—պատարագը, երեկոյեան և առաւտեան ժամասացութիւնները, և ուրիշները, և 2)^o «Պատահական» արարողութիւններից, որոնք եկեղեցու մասնաւոր անդամների կողմից պահանջ եղած ժամանակ են լինում և «Օրինակատարութիւններ» անուանում, օր. —ս. Խորհուրդները, ննջեցեալների թաղումը, ջուր օրհնելու կարգը, մաղթանքները, և ուրիշները, որոնց մասնակցելու համար Քրիստոնէական եկեղեցու «բոլոր անդամները պարտաւոր չեն ներկայ գտնուի»:

Աստուածպաշտութիւնը՝ աշխարհիս երեսին սկսուել է հինգ նախահայր Աղամի ստեղծուելու ժամանակից, որը Աստծուն ճանաչեց միայն այն միջոցին, երբ Յա—1) «բարի և չար բան իմանալու ծառի» պտղից ուտելը նորան արգելեց, 2)՝ երբ՝ եօթներորդ օր հանգստանալը որոշեց և՝ 3)՝ երբ նորա ու եւայի ամուսնական կապը օրինեեց:

Նախահայրերը, քանի որ անարատ էին, միշտ Աստծուն էին ծառայութիւն մատուցանում և Նորա «Ամենիմաստ», «Ամենակարող» և ուրիշ «Կատարելութիւնները», որոնք աշխարհիս «Ստեղծագործութեան» մէջ արտայայտուեցին, — փառաբանում Նոյնը աւելի զօրեղ կերպով շարունակեցին և իրանց մեղքի մէջ ընկնելուց յետ, երբ սկսեցին Նորա «Ներողամտութիւնը» խնդրել՝ իրանց գործած յանցանքի համար։ Միայն թէ այդ ժամանակուայ մարդոց Աստուածպաշտութիւնը «մասնաւոր», — ընտանեկան բնաւորութիւն էր կրում, որովհետև չկային ոչ սուրբ «տաճարներ» և ոչ սրբազնագործ «պաշտօնեաներ»։ Ամեն մէկը Աստծուն աղօթք էր անում այնտեղ, ուր ինքն էր ցանկանում, և թէ՝ աղօթքնելում այնպիսի խօսքեր գործածում, որոնք Նորա մեւ հական կրօնական զգացումից էին բղխում։ Ժամանակի ընթացքում՝ այդ տեսակ աղօթական դրութեան հետ միացան և «զրհաբերութիւնները», որոնք կատարւում էին առանձին՝ ընտանիքներում, «նահապետ-

Ների», այսինքն՝ տան մեծերի—ձեռքով պահ ժամանակ, երբ անհրաժեշտ էր ստացած բարիքների համար—1)՝ կամ շնորհակալութիւն անել Աստծուն, 2)՝ կամ նորա օգնութիւնը խնդրել և 3)՝ կամ կատարած մեղքերի համար գթութիւն հայցել:

Այդ տեսակ Աստուածալաշտական «մասնաւոր» դրութիւնը շարունակուեցաւ և Աստուածալաշտութիւնը «հասարակական» ու «եկեղեցական» բնաւորութիւն ստացաւ միայն Մովսիսի ժամանակ, երբ Սա, Աստծու հրամանով— 1) «Վկայութեան Խորանը» կառուցեց՝ (Հին-Ռւստի առաջին Տաճարը՝ նշմարիտ Աստծուն երկրպագութիւն մատուցանելու համար), 2) սրբազնագործ պաշտօնեաներ ընտրեց (քահանայապետ, քահանաներ և ղետացիներ — (ստորին սպասաւորներ), և 3) նիւթական վարձատրութեան «չափը» ու բոշեց:

Յիսուս-Քրիստոսը իւր Երկրային կեանքում շատ անգամ Երուսաղէմի Տաճարը այցելեց, ժողովրդին այն-տեղ քարոզեց և Եկեղեցու նշանակութիւնը¹⁾ հասկացրեց։ Նա Առաքեալներին հրամայեց - Խորհուրդները կատարել, ամբողջ աշխարհում Աւետարանը քարոզել և մաս-նաւոր ու հասարակական աղօթքներ անել։ Դորանով Յիսուս-Քրիստոսը «Սոր Կտակարանի Աստուածակաշտովթեան» սուս-Քրիստոսը «Սոր Կտակարանի Աստուածակաշտովթեան» Առաք-էիմքը դրեց, որի «Կազմովթիւնը եւ քնատրովթիւնը»։ Առաք-եալները որոշեցին, որոնք ևս՝ աղօթելու համար՝ յաճախ Երուսաղէմի Տաճարն²⁾ էին գալիս, քանի որ Հըէաների կողմից դեռ Քրիստոնեաների հալածանքը չէր սկսուել։

Քրիստոնէական Աստուածալաշնութքամ «ԸՆԸՆ»
կազմակերպութիւնը՝ ամբողջովին միայն Առաքեալների
յաջորդներին վիճակուեց այն պատուէրի համաձայն,

1) *q.mil.* 246,49. 8*mil.* 214—16. 9*mil.* 2112—13: 2) *q.mil.* 9*mil.*

ուր ասւում է—«Ամեն բան վայելչովեամբ և կարգով թո՞ղ լինի»¹⁾:

Մեր «Հայկական Եկեղեցու» Աստուածաղաշտութեան կարգերը հիմնեցին ս. Թարդէոս և Բարդողիսէոս Առաքեալները, որոնցից յետոյ ապագայ բարեզարդութիւնը գլուխ բերեցին մեր Աստուածընտիր հոգեօր հայրերը, որոնց մէջ ամենանշանաւորներն են՝ ս. Գրիգոր Լուսատրիչը, և Սահակ եւս. Մեսրովը թարգմանիչները, և Գիտ ու Յովհան Մանդակունի կաթուղիկուները. սոքա Աստուածաղաշտութեան կարգերը ճոխացրին և զանագան «Երգերով, աղօթքներով ու ընթերցուածներով» գարդարեցին:

ՏԱՇԱՐԸ ԵՒ ՆՈՐԱ ԱՐՏԱՐԻՆ ՏԵՍՔԸ:

Քրիստոնէական «Տաճար» կոչւում է այն շինութիւնը, որի մէջ աղօթելու և թէս ս. Խորհուրդները կատարելու համար հաւատացեալ մարդիկ են հաւաքւում։ Տաճարը «Եկեղեցի»^{*} էլ է կոչւում, որ կ'նշանակէ՝ «հաւատացածների ժողով», ինչպէս որ Յունական «Էկկլէսիայ» բառի թարգմանութիւնն է ցոյց տալիս։ Տաճարը կամ Եկեղեցին պէտք է օծուած լինի։

Վերկը բացատրուեց, որ նահաւետական ժամանակներում տաճարներ չկային, իսկ Աստուածաղաշտութիւնն էլ բացօթեայ էր կատարւում, աւելի այնպիսի տեղերում, ուր կրօնական նշանաւոր անցքեր են պատահել, և կամ այնպիսի գրաւիչ վայրերում, որոնք աղօթելու համար մարդկերանց դէպի իրանց են քաշել, օր.—սարերը և խիտ

¹⁾ Կորնթ. Ա. 14:10.

Դանօթ. *) Եթէ քաղաքի մէջ միքանի և կեղեցիներ են դանւում, այն ժամանակ նոցանից մէկը,—որտեղ հանդիսաւոր օրերին, որոշ Աստուածաղաշտիւան կարգը կատարելու համար, ուրիշ «Ճխերից» էլ են դայիս, — «Ըսւաղ եկեղեցի» է կոչւում։

անտառները, Վերջը՝ այդ տեսակ դրութիւնն էլ փոխուեց և աւելի պարզ պատկեր ստեղծուեց։ Մովսէսը —ինքը շինեց մի «Շարժական Տաճար», որտեղ իսրայէլացիք կարող էին—1)՝ աղօթել, 2)^o զո՞ր մատուցանել և 3)^o Աստծուց պատուէրներ ստանալ։ Մորանից յետոյ էլ Սողոմոնը Երուսաղէմում, Մորէա սարի վերայ, «Մշտականը» կառուցեց, որը և իսրայէլացիների համար հասարակական Աստուածաղաշտութեան միակ օրինաւոր տեղը համարուեց։

Քրիստոնէութեան սկիզբներում Աստուածաղաշտութեան համար «յատկապէս» կառուցած շինութիւններ չկային։ «Գործք Առաքելոց» գրքից արդէն երկում է, որ Դա կատարւում էր, Առաքեալների ժամանակ, այնպիսի մասնաւոր տներում, որոնք ուրիշ տներից միայն իրանց վսեմ «կոչումնով» էին զանազանուում և «Եկեղեցի» անունը կրում։ Առաքեալներից յետոյ էլ հալածուած քրիստոնեաները երկար ժամանական սեպական առանձին «Տաճարներ» չեն ունեցել, որի պատճառով դարձեալ իրանց Աստուածաղաշտութիւնը սկսել են մասնաւոր տներում, գետնայրերում (կատակոմբներում) և ուրիշ առանձնացած տեղերում կատակարելութիւնն էր կատարել իրանց թշնամիներից թագուել, ուրիշ հարաւորութիւնն էր կատարելիս են եղել, նուիլ։ Աստուածաղաշտութիւնն էլ կատարելիս են եղել, Աստուածաղաշտութիւններ կատարելը»։

Աղօթելու համար առանձին լաւ շինութիւններ կառուցանելը միայն «Երրորդ դարից» սկսեցին, երբ Քրիստուածանելը իւր փառաւոր յաղթութիւնը հետզիետէ ատոնէութիւնը իւր փառաւոր յաղթութիւնը հաստատուեց։ Ապաջ տարաւ և «Վերջնականապէս հաստատուեց։

Ներկայումս Քրիստոնէական Տաճարները շինուում են՝ Ներկայումս Քրիստոնէական Տաճարները շինուում են՝

1) **Փրկչի,** 2) **Աստուածամօր,** 3) **Հրեշտակապետների և**
4) Սրբերի անուններով՝ նորա կառուցանուում են—1) «Խաչաձեւ», որովհետև Յիսուս-Քրիստոսը «խաչով» փրկեց
 մեզ ստուածայի (խաւարի) իշխանութիւնից. 2) «Նաւա-
 ծեւ», որովհետև, ինչպէս նոյր իւր «տապանով» ազատուեց,
 այնպէս էլ Եկեղեցին մեզ յաւիտենական մահից կ'ազատէ,
 և, կեանքի ծովը անցկացնելով, կ'տանի-կ'հասցնէ խաղա-
 դութեան նաւահանգիստը, այսինքն՝ յաւիտենական երա-
 նութիւնը. (Եկեղեցական ձեւերից ամենազործածականը և
 ամենահինը սա է). և 3) «Շրջանածեւ», կամ կլոր, որը
 «յաւիտենականութեան» նշանակութիւն ունի, որի համար
 մեզ Եկեղեցին դաստիարակում է, որովհետև «շրջանը»
 միշտ յաւիտենականութեան միտքն է արտայայտում։

Տաճարը դրսից, գլխին, մէկ «Գմբէթ» և մէկ «Խաչ»
 ունի Տաճարի խաչը ցոյց է տալիս, որ սա «Մարդկու-
 թեան» փրկութեան համար «խաչի» վերայ մահացած մեր
 Տէր-Յիսուս-Քրիստոսին փառաբանելու նպատակով է կա-
 ռուցուած. մէկ՝ գմբէթն էլ այն միտքն ունի, որ հասկաց-
 նուի, թէ Քրիստոնէական Եկեղեցու Գլուխը *) մէկն է—
 այսինքն՝ Յիսուս-Քրիստոսը։

Դանօթ. *) «Քրիստոնէական» բոլոր Եկեղեցիները Երկու մասի են
 բաժանում՝ «Արևելեան» և «Արևմտեան»։ «Արևելեանը» այն Եկեղեցին է,
 որի հիմքը դրուեց Երուազիմում և յետոյ այն տեղից ատրածուեց՝ Հայաս-
 տան, Փոքր-Խոխ, Ցոնաստան, Եղիպատոս և Ասիա։ Նրելեան Եկեղեցուն
 պատկանում են, իրանց դաւանութեամբ, ազգութեամբ, լեզով և ծէսե-
 րով զանազանով, «Հայոց» և «Ցոնաց» Եկեղեցիները։ Ցոնաց Եկեղեցու
 զաւակն է և՝ «Թուսաց» Եկեղեցին, որը Հայուսատուեց Ցոնաստանում 988
 թովն։

«Արևմտեանը» այն Քրիստոնէական Եկեղեցին է, որը Հառվիրց տո-
 րածուեց՝ Երոսլավ, Խորիկա և Ամերիկա։ Սա կոչում է՝ «Հռովմէական»,
 «Աստինական»՝ «Պատպական» և կամ «Կաթոլիկ» Եկեղեցի, որին երկայացուցիչը
 Հռովմի պատկն է համարւած։ Սորանից (իրրե բողոք) առաջ եկաւ և հո-
 տերական Քրիստոնէութիւնը, որի կազմողն եղաւ Մարտին Լուսերը XIX-դ
 դարի տարածին կիսաշրջանում։

ՏԱՅԱՐԻ ՆԵՐՄԻ ՄԱՍԼ ԵՒ ՆՈՐԱ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ։


Մովսիսի «Վկայութեան Խորանը» երեք մասն ունէր
 —1) Սրբութիմ Սրբոց, 2) Սրբութին և 3) Գալիթ. Քրիս-
 տոնէական Եկեղեցին էլ, Դորա նման, երեք մասից բաղ-
 կացաւ—1) Գալիթից, 2) Միջին մասից, կամ Բուն Ցանա-
 րից և 3) Բեմից, կամ Ամբիոնից։

Ա. «Հեմը» Տաճարի գլխաւոր մասն է։ Սա Տաճարի
 Միջին մասից, կամ Բուն Տաճարից, մի քանի «աստիճան»
 բարձր է լինում, որպէսզի նորա վերայ կատարուած սըր-
 բազան արարողութիւնները, աղօթելու ժամանակ, բոլոր
 հաւատացողներին երևան։ Բեմի ամենակարևոր մասերն
 են—1) սուրբ Սեղանը և 2) Հնծայարանը։

Սեղանը, որ ամբացրած է անշարժ «Վէմքարի» վերայ,
 քառանկինի ծեւ ունի և է նշանը այն խորհրդաւոր մտքի,
 թէ սորա վերայ է լինելու աշխարհիս բոլոր չորս կողմից
 համար Աստուածային Տրապէզը (ճաշը)։ Սեղանի վերայ է
 մատուցանում ու Պատարագը։ Ս. Սեղանը պէտք է հաս-
 տատուն լինի և նախապէս էլ ու Միւռոնով օծուած։ Սե-
 ղանը լինի կ նախապէս էլ ու Գողգոթա-
 ղանը, բարձր գիրք բոնելով, յիշեցնում է և Գողգոթա-
 ղանը, ուր Քրիստոս խաչուեց։ Սեղանի վերայ են գտըն-
 լեալը, ուր Քրիստոս խաչուեց։ 1) Տաճարի գլխաւոր մասն
 ուում՝ ա. Խաչը, 2) Աւետարանը, 3) Տէրունական
 պատկերը, 4) Մասնատուելի և 5) Միւռոնաշխցը (կամ
 Աղաւնին)։ Մասնատուելի մէջ, որը, մեծ մասամբ, ուկուց
 կամ արծաթից է լինում շինուած, միշտ «Խորհրդի Հնծա-
 կամ արծաթից է լինում շինուած, միշտ կողմում երկու
 «անուններն» են գտնւում, որ հիւանդներին, պատահած ժամա-
 նակ, Դորանով հաղորդեն։

Սեղանի ուղղութեամբ է տարածւում՝ փայտից կամ
 քարից լինուած՝ Խաչկալը, իւր գլխի խաչով, որից էլ իւր
 քարից լինուած՝ Խաչկալը, Սեղանի աջ ու ձախ կողմում երկու
 «անուններն» է ստացել։ Սեղանի աջ ու ձախ կողմում երկու
 դուռն է գտնւում, որոնց վերայ մեր Հայոց Եկեղեցում
 պէտք է անշուշտ նկարուած լինին Հայաստանի նախկին
 պէտք է անշուշտ նկարուած լինին Հայաստանի նախկին

Հուսաւորիչ Թաղէսսի և Բարդուղիմէսսի պատկերները. կան սեղաններ և առանց գոների Բեմիներսի կողմը, հիւսիսային պատում, մի փոքրիկ փոս (խորշ) է գտնւում, որտեղ ո. Պատարագի Ընծաները, — հացն ու գինին՝ «սպաս են դրտւմ»: Դա կոչւում է Ընծայարան^{*)}, որը մեզ Հին-Ռվատի «Առաջաւորութեան» սեղանն է յիշեցնում: Ընծայարանում գտնւում են՝ «Սկիճը», «Մալզման» (պատկ. 1) և «Քօղը».



№ 1. Սեղանը և այլն, իսկ Սեղանի ճակատին՝ Աստուածամօր պատկերը, Մանուկ Յիսուսը գրկին, իբրև խորհրդական նշան, որ Եկեղեցին մայրական սիրով է գրկում հաւատացեալներին: Բեմի հարաւային, կամ ճախակողմեան, դռան գլխին գտնւում են՝ Հին-Ռվատի նշանները — 1): «Տասը Պատուիրանը», 2): «Ահարոնի Թագը» և 3): «Պղնձէօձը». իսկ հիւսիսային, կամ աջակողմեան, դռան գլխին՝ Նոր-Ռվատի նշանները — 1): «Խաչը», 2): «Աւետարանը» և 3): «Սկիճը»: Եկեղեցու աջ ու ձախ կողմը իմանալու համար՝ պէտք է երեսը դէպի արևմուտք դարձնել, — այն

^{Խանօթ. *)} Հին ժամանակներում՝ «Ընծայարանը» բեմի վերաւ չէր լինում, այլ՝ մօռը, առանձին բաժանմունքում, որը հիւսիսային կողմն էր գտնւում և բեմի հետ էլ բարարերութիւն ունէր. թիրեաւ այդ է պատճառը, որ խորանի դուսը, հնումն, բեմի վերաւ է բացուելիս եղել:

Ժամանակ՝ աջ ձեռքը կ'ընկնի հիւսիս, կամ՝ աջ կողմը, ձախը՝ հարաւ, կամ՝ ձախ կողմը, երեսի մասը՝ արևմուտք, իսկ քամակը՝ արևելք. կամ՝ կարելի է դորա հակառակ կանգնել և նորա համեմատ էլ կողմերը որոշել: Սեղանի կողքին է պահւում, Խաչկալի յետել, «Խաչվառը», (պատկ. 2), որը կտորից կամ մետաղից շինած եկեղեցական դրօշակ է, ձողի վերայ ամրացրած և վերան էլ Տէրունական պատկեր նկարած՝ օրինակ՝ Խաչելութիւն, Ծնունդ, Կայլն. Խաչվառի վերայ սրբերի պատկեր պէտք է չ'լինի: Խաչվառը գործ են ածում «անդաստանի», «թափօրի» և այլ «հանդէների» ժամանակ, որի ծագման մասին հետեւեալ անցքն է պատմւում: Կոստանդիանոս Մեծը, գեռ Քրիստոնէութիւնը չ'ընդունած, բայց՝ հակուած, — իւր թշնամի Մաքսենտիոսի հետ ունեցած մի կուռում՝ լուսեղէն խաչ է տեսնում, որի վերայ գրուած է լինում, թէ «Սորանով Կյաղթես»: Գրուած է մէջ Քրիստոսին ծածուկ հազօքը, որի մէջ Քրիստոսին ծածուկ հաւատացողներ շատ կային, — քաջալերում է Եկեղեցութիւնը տանում. այդ ժամանակներից սկսած, գորա գործածութիւնը «Քրիստոնէական» սկսած, գորա գործածութիւնը «Կյաղթութեան» նշան համարւում: Սեղանի աջ ու ձախ լինուած իսկ արևմտեայ «Քշոցներ», կողմում կան մէկ-մէկ արծաթեայ «Քշոցներ», № 3. Գշոց և այլն մէջ է մտնում և իբրև «Կյաղթութեան» նշան համարւում: Սեղանի աջ ու ձախ կողմում կան մէկ-մէկ արծաթեայ «Քշոցներ», մտնում կան մէջ է մտնում և իբրև «Կյաղթութեան» նշան համարւում: Սեղանի այս պատճառած, իսկ իրանք՝ Երկայն ձողերի վերայ հազօքած:



№ 2. Խաչվառ:

Եկեղեցութիւնը շատ կային, — քաջալերում է Եկեղեցին տանում. այդ ժամանակներից սկսած, գորա գործածութիւնը «Կյաղթութեան» նշան համարւում: Սեղանի այս պատճառած, իսկ իրանք՝ Երկայն ձողերի վերայ հազօքած:

№ 3. Գշոց:



**Սոցա վերայ են նկարուած վեցթևեան Սերովըէների եւ
Քերովըէների» պատկերները, իբրև նշան, թէ նոքա սպա-
սաւորում են ս. Խորհրդին:**

Բ. «Բուն ծանարը» երկու մասից է բաղկացած, ու լոնցից առաջինը՝ տղամարդոց, իսկ յետևինը՝ կանանց համար է յատկացրած. ունի՝ յետևի մասում՝ և՝ «Վերնատուն» կամ «Վերնայարկ» Տղամարդոց մասում՝ բեմի մօտ գտնուած բաժինը «Ատեան» է կոչւում, որի աջ և ձախ կողմերումն են գտնուում «երկու դասը», որտեղ հոգեոր պաշտօնեաներն են կանգնուում, և դասէ-դաս հոգեոր երգերը երգուում, բացի «Նախատօնակներից» և «անդաստանից», որոնց ժամանակ միայն «Մէջ տեղն» են կանգնուում և իրանց պաշտօնը կատարում։ Աջակողմեան դասումն է զգւում «Հայրապետի Դահը», կամ՝ «Առաջնորդի Աթոռը». այդ դասումն է կանգնում միշտ և՝ եկեղեցու «Աւագ Երեցը»։



N

№ 4. Գ. «Գալիթը» Տաճարի «արևմտեան» մասն
ԲՈՒՐԳԱԲԻ: է: Հին-Քրիստոնէական եկեղեցում նա «երեխաների»,


այսինքն՝ սուրբ Մկրտութեան պատրաստւողների և թէ
մեղքերը քաւողների համար էր նշանակուած եղել. դա
տաճարի միջին մասից պատով էր բաժանւում, մէջը միայն
«մի դուռն» ունենալով։ Հին ժամանակ գաւթումն էր շին-
ւում «մկրտութեան աւազանը»։ Այստեղ էին քրիստոնեա-
ները, Աստուածաշտութիւնը վերջանալուց յետոյ, «Ընդ-
հանուր Սիրոյ» սիրոց ձգում և հաց ուտում։ Որովհետեւ
ներկայումս հանգամանքները բոլորովին փոխուել են և
հասակաւոր մկրտուղներ էլ, համարեա թէ, չ'կան, — այդ
պատճառով՝ նոր եկեղեցիներում այդ նպատակի համար
գաւիթներ²) չեն կառուցանում. երբեմն՝ լինում են միայն
եկեղեցու «հիւսիսային և հարաւային դռներում» փոքրիկ
նախագաւիթներ, որտեղ մոմ են վաճառում։

ՏԱՐԱԾԻ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՕԾՈՒՄԸ:

Երբ որ Տաճարի հիմքն են կամենում գցել, այն ժամանակ ե-
պիսկոպոսը և միւս հոգեոր պաշտօնեաները, հանդիսաւոր կերպով,
Միւռոնը եկեղեցի շինելու տեղն են տանում, ուր, հոգեոր իշխա-
ս. Միւռոնը կողմից հաւանութիւն դուած մակարդակի համեմատ,
նութեան կողմից հաւանութիւն դուած մակարդակի համեմատ—
զանազան «փորուածքներ» են անում և 16 անտաշ քար ընտրում—
պատրաստում:

Որոշած ազօթքներ, գրքեր ու սպառապել կ-ը և Ականներ կատարում. — յի կաններ երգելիս՝ հետեւալ գործողութիւններն են կատարում. — յի շեալ 16 քարը—նախ՝ ջրով, և, ապա՝ գինով են լուանում, իսկ վերջն էլ իստակ շորով սրբում, եկեղեցու ժառանգաւորների (կնքահայրերի) ձեռքը տալիս, մաքուր կտաւով ծածկուած սկտեղ վերայ դնում և յետոյ կրողներին յանձնում: Այդպէս մաքրելուց զինի՝ քարերը տայտապահ կանունական ամեն մէկը իւր որոշած տեղը, ինչպէս ներկայ նկարն է նում են ամեն մէկը:

ցոյց տալիս, ուր կրողները, սկսել վերայ դրած քարերով, օծող եպիսկոպոսի գալուն են սպասում. (սլամկ. 5): Եպիսկոպոսը, կրողի զբկում, եկեղեցու հիւսիս—արևելքան անկիւնում, ամենից շուռաջ՝ օծում է Պետրոս Առաքեալի անուանը նուիրած քարը, իսկ յետոյ էլ «կարգով», հիւսիսային պատի մէջ, Անդրէասի, Փիլիպպոսի, Գրիգոր Լուսաւորչի և Բարդուղիմէոսի քարերը: Դոցանից յետոյ օծում են



Սական Յակովոսի և Թադէոսի, և ապա՝ արևմտեան պատի մէջ, դուան կողքերին, Սիմէոն Կանանացու և Մատթէայի քարերը:

Երբ կրողների զբկում քարերը օծում են, այն ժամանակ եպիսկոպոսը դնում է Պետրոս առաքեալի քարի մօտ կանգնում, ըլլչը վերցնում և քար դնելու տեղը փորում: Այդպէս էլ բոլոր քարերի համար:

Տեղերը փորելուց յետոյ, եպիսկոպոսը կրկին Պետրոսի քարի մօտ է գնում, նորան համբուլում, տակը փուած կտաւով փաթաթում, փորած տեղը դնում և յետոյ հողով ծածկում. այդպէս էլ բոլոր քարերը:

Ամենից վերջը՝ եպիսկոպոսը ճարտարապետին և բանտորներին առաջարկում է օծած բոլոր քարերը թէ կրով և թէ քարով փոքր ենչ բարձրացնել, որ ոտքերով չ'կոխկատեն:

Երբ այդ ձեռվ եկեղեցին կառուցանում—վերջացնում են, այն ժամանակ էլ սկսում են թէ ներսից և թէ դրսից «օծել», որն էլ հետեւալ կերպով է կատարելում:

Սկզբից, հանդիսով ս. Միւռոնը նոր կառուցած եկեղեցին են բերում, ուր, ութ օր շաբաթակ, Մայր-Մաշտոցի համեմատ, միայն երեկոյեան ժամերգութիւններ են անում և եկեղեցու համար տօն նաւակատիք կատարում:

Վերև յիշած հանդէսները վերջանալուց յետոյ՝ օծումն է սկսում: Ամենից առաջ օծում է, վերևից, վէմքարը՝ խը «գագաթի» և կողքի խաչերով, յետոյ՝ բեմի, ամբողջ եկեղեցու հիւսիսային, հարաւային և արևմտեան պատերի և ապա՝ խորանների ու ատեանի խաչերին և արևմտեան պատուի գիշեած պէտք է լինին: Հերը, որոնք նախապէս ջրով եւ գինով լուացած պէտք է լինին: Կեղծի խաչերը օծելուց յետոյ այնուեղ «անդաստան» է անում և եկեղեցու անունը՝ դրոշմւում:

Օծում են և՛ եկեղեցու պատերի «դրսի» փորագրած խաչերը: Երբ ամբողջ օծումը վերջանում է, այն ժամանակ էլ սկսում է առաջարկը մատուցանել յիշեալ նոր օծուած եկեղեցում: Ին ս. պատարագը մատուցանել յիշեալ նոր օծուած եկեղեցում: Եկեղեցու հիմքը ցցելու և օծելու կարգը սահմանել է մեր Յովհան Մանդակունի կաթողիկոսը:



ԱՍՏՈՒԱԾՊԱՇՏՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՈՆԵԱՆԵՐԸ:

Հին-Ռւխտի եկեղեցին «Ընէր՝ 1»՝ քահանայապետ, Զ՝ քահանաներ և Յ՝ 3՝ դևտացիներ. առաքեալներն ևս՝ Դորանման, Նոր-Ռւխտի Քրիստոնէական, Եկեղեցու մէջ «Նուիրապետութեան» երեք աստիճան հաստատեցին, որոնք հետեւել անուններն ստացան—1)՝ Եպիսկոպոսութիւն, 2)՝ Քահանայութիւն և Յ՝ 3)՝ Սարկաւագութիւն։

Դոքա բոլորը, ընդհանուր անունով, «սրբազնագործ պաշտօնեաներ» են կրչում այն պատճառով, որ, ձեռնադրութեամբ և. Հոգու Ենորհքը ստանալով, ո. Խորհուրդներն են սրբագործում և մատակարարում Եկեղեցական այդ տեսակ «Նուիրապետութեան» սկիզբը ՅիսուսՔրիստոսից զրուեց, երբ Սա Խւր համար 12 աշակերտ ընտրեց և ժողովրդի մէջ «Արքայութեան» (Արդարութեան) սերմեր ցանելու իրաւունք տուեց, երբ հաւատացեալների թիւը շատացաւ, այն ժամանակ աշակերտները նոր հաւատացեալների հաւատի գործերը իրանց միջից «ընտրած» մարդոց յանձնեցին, որոնց եպիսկոպոսներ ծնոնադրեցին, ինչպէս վարուեցին և մեր Հայաստանի նախկին «Լուսաւորիչ Թագէոս և Բարդուղիմէոս Առաքեալները»։

«Եպիսկոպոսը» ներկայումս իրաւունք ունի՝ Աստուածպաշտութիւնը և բոլոր խորհուրդները կատարել, ժողովրդին Քրիստոնէական հաւատը սովորեցնել, Եկեղեցին և վէմ-քարը օծել, իսկ Կաթուղիկոսը՝ և սուրբ «Միւռոնը» օրհնել։

«Քահանան» կախումն ունի Եպիսկոպոսից. նա է իրան «հովուելու» յանձնուած «ծխին» Քրիստոնէական հաւատը սովորեցնում և Աստուածպաշտութիւնն ու խորհուրդները կատարում, բացի ձեռնադրութիւնից, որը Եպիսկոպոսական դասակարգին է վերապահուած։

«Սարկաւագը» միայն Աստուածպաշտութեան ժամանակ օգնում է Եպիսկոպոսին և քահանային։

Ձեռնադրութեան «Չնորհքի» վերաբերեալ՝ բոլոր «Եպիսկոպոսները» իրար հաւասար են, թէև զանազան անուններ են կրում—պատրիարք, միտրապօլիտ, արքեպիսկոպոս և քորեպիսկոպոս։ Այդ բոլոր անունները նոցա միայն արտաքին իրաւունքները և առաւելութիւններն են ցոյց տալիս։ Ա. Հոգու Ենորհքը դոցա վերայ հաւասարապէս է հանգչում։ Այս դասակարգից վեհագոյն դիրք է բոնում «Կաթուղիկոսը», Որի թէ ընտրութիւնը, թէ օծումն և թէ իրաւունքները բոլորովին այլ կերպ են լինում և բարձր։

Ա. Հոգու Ենորհքի մասին պէտք է նոյնը ասել և՝ «Քահանաների ու Սարկաւագների» վերաբերմամբ։ «Քահանայ, երէց և աւագ քահանայ» անունները միայն արտաքին իրաւունքներն ու առաւելութիւններն են ցոյց տալիս, և ոչ թէ ձեռնադրութեամբ սաւացուած չնորհքը, ինչպէս և, «Սարկաւագ» ու «աւագ սարկաւագ» կոչումները։

Բացի սրբազնագործ պաշտօնեաներից, Եկեղեցումն կան, ծառայութիւններ մատուցանելու համար, և՝ ընտրուած «ստորին պաշտօնեաներ», որոնք, ընդհանուր անունով, տիրացուներ են կոչում—(1)՝ Կիսասարկաւագ, 2)՝ Հարնկալ, 3)՝ Երդմնեցուցիչ, 4)՝ Ընթերցող և 5)՝ ղոնապան։

ԱՍՏՈՒԱԾՊԱՇՏՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԳՈՐԾԱԾԻՈՂ ԶԳԵՍՑՆԵՐԸ:

Բոլոր դասակարգերի սրբազնագործ և Եկեղեցական պաշտօնեաները Աստուածպաշտութեան ժամանակ (աւելի և պատրագին) առանձին զգեստներ են հագնում, որոնք հոգեսոր որոշ նշանակութիւն ունին։ Բարձր դասակարգի հոգեսոր պաշտօնեաները միշտ ստորին դասակարգի պաշտօնութեան մասին է վերապահուած։

տօնեաների զգեստներն են գործածում, աւելացրած և այն զգեստները, որոնք որոշ դասակարգին են յատկացրած։ Օրինակ՝ ջահընկալները Աստուածպաշտութեան ժամանակ ժամաշապիկ են հազնում։ Սարկաւագները, բացի ժամաշապիկից, ունին և ուրար. քահանաները—ժամաշապիկ, փորուրար, բազմաններ, գօտի, վակաս, սաղաւարտ, շուրջառ, թաշկինակ, և, հասարակ ժամերգութեան միջոցին—փիլօն. եպիսկոպոսները, բացի վերոյիշեալներից,—եմիփորոն, արտախուրակներ, թագ կամ խոյր, պահապիէ և օձագլուխ դաւագան. կաթուղիկոսը—դոցա աւելացրած և կոնքեռ, արծուէնկար գորգ և հոգուական գաւագան։

«Ժամաշապիկը» յիշեցնում է կրողին, որ նա պէտք է միշտ մաքուր և անարատ լինի. (պատկ. 6):



№ 6. Ժ.Ա.Մ.Ա.Շ.Ա.Պ.Ի.Կ.

(Ճախ) Անելով՝ հասկացնում է, որ սարկաւագը դեռ կարսղութիւն չունի Քրիստոսի լուծը ամբողջովին կրելու. բազկուրարը ևս աւելի պակաս ոյժն է ցոյց տալիս, ուստի և, ծալած, ձախ թիվ վերայ է ձգում. (պատկ. 7):

«Փերուրարը» երկու ուրարից կազմուած ուրար է, որը սրբազնագործ պաշտօնեաները պարանոցի վերայ են ձգում և ամբողջ կուրծքը դորանով մինչև ներքե ծածկում. դա Քրիստոսի լուծը ամբողջովին կրելու նշան է համարում. (պատկ. 8):



№ 7. ՈՒ.Բ.Յ.Ր.



№ 8. ԳՈՐԾՈՒՐԱՅ. ՆԵՐԸ կապիկով, իրանց աւելի «զգաստ» են զգում սրբազնագործ պաշտօնեակի:

«Ղակասպը» քահանան է կրում իւր ուսին նորա համար, որ

«Բազականները» ձեռքերին են հազցնում և կապում նորա համար, որ Աստուածապաշտութիւնը աւելի յարմարութեամբ կարողանան կատարել։ Նորա մեղ յիշեցնում են այն կապանըները, որոնցով Քրիստոսի ամենամաքուր Զեռներն էին կապիկ, երբ որ Նորան Պիտասոսի մօտ ասրան. (պատկ. 9):

«Թաշկինակը» մաքրութեան նշանակութիւն ունի։ Սա վերցրած է Քրիստոսի օրինակից, երբ, կորհրդաւոր Ընթրիքի ժամանակ, իւր աշակերտուների ոտները լուաց և յետոյ «Ղենջակով» սրբեց։

«Գօտին» հոգեսր սրբազնագործ պաշտօնեական գործութիւնների ժամանակից,



№ 10. Պ.Ա.Կ.Ա.Ս.

ցոյց տայ, թէ Քրիստոսը «մոլորեալ ոչխարին», այսինքն՝ «Մարդկութեան ծանրութիւնը», իւր ուսերի վերայ կրեց. (պատկ. 10):

«Փիլօնը» կրում են՝ կաթուղիկոսը, եպիսկոպոսը, վարդապետը և քահանան հասարակ ժամերգութիւնների ժամանակ, որ, սովոր ժամանակ ժամանակ ժամերգութիւնների ժամանակ, որ,




№ 11. ՇՈՒՐՋԱՅԻ.

բարար, սկ, իսկ արժանաւորներինը և բարձրաստիճան հոգևորականներինը՝ ծաղկանկար է լինում և թիսուսի թէ «անկար քղամիտը» և թէ այն «ծիրանին» յիշեցնում, որը չարչանքի ժամանակ նորա վերայ ձգեցին: № 12. ՍԱԴԱՒԻԱՐԸ:



№ 12. ՍԱԴԱՒԻԱՐԸ:

«Շուրջառը» գործ են ածում վերելիշած սրբազնագործ հոգևորականները՝ թէ ՞ պատարագին, թէ սուրբ խորհուրդները և ուրիշ արարութիւնները կատարելիս, թէ նախատօնակ, անդաստան և թափօր անելիս, և թէ ս. Աւետարան կարգալիս, որը հոգեւոր զրահի նշանակութիւն ունի: Հնումն՝ այդ տեսակ զգեստ էին կրում թէ «թագաւորները և թէ բարձրաստիճան մարդիկ»: Դա հոգեսր պաշտօնեաններին է տրուել այն մտքով, որ ցոյց տրուի, թէ դոքա ժողովով համար հոգեսր «պետերի» տեղ են բռնում. (պատկ. 11).



№ 14.:

«Մաւաւարտը» Անարոնեան թագի փախարէն է, որի զլսին մի փոքրիկ խաչ կայ ամբացքած, սա հոգեսր ԱՐՏԵՎՈՒՐԱԿԱՆԵՐ. զէնքի տեղ է գործածւում, մէկ որ

թշնամու դէմ պատերազմ մզւլու միջոցին յաջողութիւն ունենալու և մէկ էլ որ՝ Փրկչի կը ած փշէ պատկը յիշեցնելու նպատակով: Հնումն՝ սորան իրքի «թագաւորական» զլսի «գարբարանք» էին բանեցնում, սորան հոգեսր պաշտօնեանները կրում են այն մտքով,



№ 13. ԹՈՒԳ ԿՈՄ ԽՈՅԲ:


որ ցոյց տրուի, թէ սոքա էլ են «հոգեւոր զեկավարներ» ընդունւում. (պատկ. 12): Սոյն նշանակութիւնը ունի և՛ «եպիսկոպոսական



№ 15. ԵՐԵՎՈՒԹՅՈՒՆ:

կամ «Հայրապետական» «Երկվեղկեան թագը կամ Խոյրը», որի զլսին երկու փոքրիկ խաչ կայ կացրած. (պատկ. 13):

«Արտախուրակները» թագի յետիկ կողմից կախ ընկած զարդեր են, որոնք վերցրած են Հրէաների քահանայապետի զլսին դործածած «ապարօշից», որը յետիկ ամրացնում էին և յետոյ երկու ծայրը կախ գցում. (պատկ. 14):



№ 16. ԿՈՆՔՅԵՅ:

Եպիսկոպոսը; Աստուածաշտութեան կարգը կատարելիս, հարեպակալուսուր; Աստուածաշտութեան կարգը կատարելիս, հարեպակալուսուր, դործ է ածում և՛ «Եմիփորոն», (ուսնոց), որը կաւոր գեպում, դործ է ածում և՛ «Եմիփորոն», (ուսնոց), որը



№ 17. Արտօնի դորա:

որը քառանկիւնի ձև ունի և կախ է անուում և նշանակում «հոգեցոր սուրբ»—այսինքն

—Աստծու Խօսք, Որով հոգեսրականները պէտք է զինուին՝ անհաւատութեան և անազնութեան դէմ մաքառելու համար: Կոնքեռ տըրում է և՛ պատուաւոր արքեսպիկոսուներին ու պատրիարքներին, որոնք իրանց «առանձին» մատուցած «օգտառէտ» թէ եկեղեցական և թէ աղդային «ծառայութիւններով» անուն են հանել. (պատկ. 16):

«Արծուէ գորզը» մի կը որ փոքրիկ գործուածք է, որի վերայ մի գլխանի արծիւ է դուրս քերած, որը քաղաքից վերին է սաւառնում: Դորան Աստուածպաշտութեան ժամանակ Հայրապետի ոտքերի տակ են ձգում: Արծուէ գորզի նշանակութիւնը այն է, որ Քահանայա- № 19. ԵՊՈՒ- պետը իւր կեանքով և ուսումով իւր ԳՅԱՆԱՆ, հօտին լաւ օրինակ տայ և արծուի որատեսութեամբ իւր հօտին դիտէ (պատ. 17):



Ֆ.Ա.Ա.Զ.Ա.:



ԵՊՈՒ-Ա.Ա.:

Կաթուղիկոսը Աստուածպաշտութեան ժամանակ մի ուրիշ տեսակ, գլուխը կը ու գնդի մէջ տեղը խաչազարդ, «զաւազան» է գործածում, որը «Հովուական» է կոչում. (պատկ. 18):

Եպիսկոպոսի գործածական գաւագանը «Երկզիւանի» օճապարդ գաւագանն է, որը թէ Մովսէսի գաւագանի՝ թէ անապատում շինած պղնձէ օձի յիշատակը պահպանելու համար է սահմանուած. (պատկ. 19):

Կաթուղիկոսը, երբ «Եղիարանից» գուլս է գալիս, այն ժամանակ էլ մի ուրիշ խաչազիւխ գաւագան է կրում, որը «Աստ է կոչում» (պատկ. 20):



№ 21. Վ.Ե.Պ.:

Իրեւ իշխանութեան նշան՝ Կաթուղիկոսը և եպիսկոպոսը ամեն ժամանակ ականակուռ մատանիներ են կրում, որոնցից առաջինը՝ մատանեմատին, իսկ երրորդը՝ ձկոյթին է հագննում:

Կան զգեստներ, որոնք «ընդանուր գործածութիւն» ունին: Բոլոր սրբազնագործ հոգեսրականների «սովորական» վերևի հանդերձը «Սրեմ» է կոչում: «Կուտակրօն» հոգեսրականները իրանց զիմսին «Վեհար» են կրում (պատկ. 21), որը, գմբէթի նման, սրածացրդագիտաթ ունի: «Կամիլաւկան», իրեւ պարզի, արժանագործունեութիւն ունեցող քահանաներին է տրւում: Այդ տեսակ քահանաները կաթուղիկոսի կողմից պարզեատրում են և՛ «Լանջական խաչով»: Վարդապետները, արժանաւոր ծառայութեան համար, իբրաւագետները, ստանում են «Վարդապետական» խաչ կրելու իրաւոնք, իսկ եպիսկոպոսները՝ «Պանազիէ» (ամենասուրբը), որի վերայ լինում է կամ Տիրամօր, կամ ՅիսուսՔրիստոսի և կամ ուրիշ սրբի բոլորաձեւ պատկեր:

Եկեղեցում ներկայումս՝ քրեմ բարձրանալիս, բոլոր հոգեսրականները և աշխարհականները ուսնամանները հանում են և «Հոյաթափիեր» գործածում: Հնումն՝ «Եկեղեցի մտնելիս» ուսնամանները

հանում էին և՝ բոլոր հաւատացեալները. միայն այժմ այդ սովորութիւնը վերացած է:

Մեր Եկեղեցու ժամակարգութեան՝ և թէ դորանից դուրս գործածւող՝ բոլոր զգեստները շատ հին են և սկիզբըն են առած Քրիստոնէութեան թէ սկսուելու և թէ զարդանալու դարերից։ Դոքա աւելի վերցրած են Երուսաղէմի և Կեսարիայի Քրիստոնէական Եկեղեցու զգեստների ձևերից։ մինչև հինգերորդ դարը դոքա մասնաւոր փոփոխութիւնների են Ենթարկուել, բայց յետոյ մնացին բոլորովին անփոփոխ մինչև մեր օրերը։



ԱՐԲՍՉԱՆ ԶԵԽԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԵՐ.

Քրիստոնէան, ո. Տաճարը մտնելով, ամենից առաջ ո. «Խաչն» ու ո. «Պատկերներն» է տեսնում, որովհետեւ դոքա Տաճարի համար ոչ թէ միայն իբրև ամենալաւ զարդարանքներ, այլ և՝ «յարգանք» մատուցանելու առարկաներ են համարւում։

«Խաչի» գործածութիւնը շատ հին է։ Թէ մինչև Քրիստոսի Ծնունդը և թէ Քրիստոնէութեան առաջին ժամանակները՝ Եթանունները խաչը «պատժելու» գործիք էին ընդունում. քրիստոնէանները, ընդհակառակն, խաչը իրանց փրկութեան առարկան և հաւատի էլ «դրօշակն» էին համարում։ Այդ պատճառով՝ Եթանունները քրիստոնէաններին հալածում էին, խաչապաշտ անուանում և յարգանքի արժանի խաչը ծաղրի Ենթարկում։ Առաջին դարերի քրիստոնէանները, սուրբ Խաչը (պատկ. 22) յարգելով, իրանց բնական 22.ս. և լաւ բանները և ազօթատները նրանկարներով էին զարդարում. միայն թէ, հարկադրուած, այնպէս էին ձևակերպում, որ Խաչի նշանակութիւնը այնքան էլ պարզ չ'ընկնի



հեթանոսների աչքին։ Խաչի շատ հին ձևեր են Երևացել քրիստոնէական գետնայրերում (կատակոմբներում), որտեղ քրիստոնէանները իրանց Աստուածաշատութիւնն էին կատարում։ Այդ տեսակ ձեւերից աւելի յայտնիները սոքակն—1)՝ «Եռածայր», որի համար ուղղահայեաց գիծ է քաշուելիս եղել և վերին ծայրին կարծ հորիզոնական կը դանուել (T). 2)՝ «Քառածայր», ծուռը խաչ, մեր գրութեան «Ք» տառի նման, միայն ձախակողմեան թեք գիծը աջակողմեան թեք գծին հաւասարեցրած (X), և 3)՝ «Հարածայր», միայն հորիզոնական և ուղղահայեաց գծերը միմեանց կարած, ուղիղ անկիւններ կազմած և չորս թեկը իրար հաւասար բոնած (+)։ Այս վերջին ձեր հնումն աւելի շատ է գործածական եղել։ Միայն, — երբ Հռովմէական կայսրութեան մէջ Եթանունութիւնը բոլորովին արմատախիլ եղաւ, իսկ Քրիստոնէութիւնը տիրապետող կրօն դարձաւ, — այն ժամանակից սկսած՝ Խաչի «փոխաբերական» ձևերը «փոխականի» փոխուեցան և վերան էլ խաչուած Փրկչի Պատկերը բաց կերպով դուրս եկաւ։

Սուրբ պատկերներ—Ս. պատկերների գործածութիւնը ևս շատ հին է։ Հին-Ռւսակի մէջ, Աստծու հրամանով, Մովսեսի «Վկայութեան Խորանում» «Ռւսակակի» գըլ-խին երկու քերովքէի ոսկէ «քանդակներն» էին շինած, իսկ Տաճարի միջի վարագոյնների վերայ էլ դոցա «պատկերները» դուրս բերած։ Նոր-Ռւսակի մէջ պատկեր գործածելու առաջին օրինակը տուեց Խոքը՝ Յիսուս-Քրիստոսը, երբ, ըստ աւանդութեան, Արգար թագաւորին Խոք Պատկերը ուղարկեց, Դուկաս Աւետարանիչը ևս Աստուածամօր Պատկերը նկարեց։ Խաչին քրիստոնէանները՝ իրանց բնական կրօնական պահանջին բաւականութիւն տալու նպատակով՝ սկսեցին առաջին երեք դարի ընթացքում իրանց տները և ազօթարանները սրբազն ձևակերպու-

թիւններով զարգարել, դոցա առաջ մոմեր և կանթեղներ վառել, անուշահոտ խունկ ծխել և մտքով իրանց «անկեղծ մէրը, յարգանքը և խոնարհութիւնը» աբտայայտել ոչ թէ փայտին և ներկին, այլ պատկերներում դուրս բերած թիսուս-Քրիստոսին և Սրբերին Միայն թէ դոքա, համեմատաբար, քիչ էին, որովհետեւ հեթանոսներից երկիւղ էին կրում, որ վերջինները իրանց ազօթարանները չ'դանեն, ներս չ'մտնեն, չ'պղեն և չ'ոչնչացնեն այն բոլոր սրբազն իրեղնները, որոնց այնտեղ կ'գտնէին: Հենց այս պատճառով՝ քրիստոնեանները աւելի լաւ համարեցին Աստուածաշնչի մէջ եղած դէպքերը պատկերացնել, որովհետեւ դոցա մասին հեթանոսները աւելի քիչ տեղեկութիւններ ունեին.—օրինակ՝ «Յովսէփի վաճառելը», «Բարելոնի հնոցում երեք պատանու լինիլը», «առիւծների վոսում Դաշնիկի գտնուիլը», «հինգ հացով հինգ հազար մարդոց կերպառուիլը», և այլն: Թիսուս-Քրիստոսին էլ պատկերացնում էին՝ իբրև իւր ուսերի վերայ մոլորուած ոչխար տանող՝ բարի «Հովիւ» և «Աստու Դառն». Նորան երբեմն, փոխարեցական մտքով, և իբրև «Չուկն» էին պատկերացնում: Թիսուս-Քրիստոսի այս վերջին ձևակերպութիւնները հնումն շատ էր տարածուած: Բայց, երբ Հովմէական կայսրութեան մէջ հեթանոսների հալածանքները վերջացան և «Քրիստոնէութիւնը տիրապետող» կրօն դարձաւ, այն ժամանակ «փոխարեցական» ձևակերպութիւնները տեղ տուին «իսկական» պատկերներին, թէ և այժմ ևս տեղտեղ այդ հնութեան հետքերն են երեսում:

ԱՍՏՈՒԱՆՊԵՏՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԿԱՏԱՐԻՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ:

1). «Երեսին խաչ հանելու» սովորութիւնը մեր մէջ մտել է Առաքեալների ժամանակներից: Մենք՝ Հայերս՝

գործ ենք ածում «ամըողջ թաթը», որը նախապէս դնում ենք մեր ձակատին և ասում «Յանուն Հօր», սրտին— «և Որդւոյ», ձախ ուսին— «և Հոգւոյն», աջ ուսին— «Ալլը-ըոյ», և վերջը՝ գծագրուած խաչի մէջ տեղը— «Ամէն»: Դա մարգուս կեանքի և գործունէութեան բոլոր դէպքերում և հանգամանքներում Աստծուց պաշտպանութիւն և սրտապնդութիւն խնդրելու կարիքն է ցոյց տալիս: Եւ արդարեւ սրտանց խաչի նշանը ձևակերպելով, հաւատացողին մեծ ոգիորութիւն է տրում և ամեն արգելք յաղթահարել մղում, խոստանալով այդ խաչին նույիրել իւր միտքը, իւր սիրտը և իւր բոլոր ոյժերը, որի համար ասում է «ամէն», որ Հըելց բառ է և նշանակում է «Ճշմարիտ է», կամ «թող այդպէս լինի»:

2). «Դլուխ տալը» դէպի Աստուած ունեցած մեր «անկեղծ զգացմունքների, սիրոյ և խոնարհութեան» արտայայտութիւնն է ցոյց տալիս: «Ծունը ղնելը կամ երեսի վերայ ընկնելը» միենոյն զգացմունքների ամենազօրեղ արտայայտութիւնն է համարւում: Վերջինիս սկիզբը հին է. Սողոմոն իմաստունը, իւր կառուցած հրաշակերտ Ցածարը օծելիս, ծնկաչոք ազօթք արեց:

3). «Օլնելու» սովորութիւնը հին է. հնումն մեծերը օրհնում էին փոքրերին. Մելքիսեդէկ քահանան օրհնեց Աբրահամին. Մովսէսն ևս իրաւունք տուեց քահանաներին, Աստծու անունով, իսրայէլեան ժողովրդին օրհնել: Նորուխտի սրբազնագործ հոգեորականներն ևս այդ սովորութիւնը ընդունեցին և սկսեցին հաւատացեալներին խաչաձև օրհնել թէ ժամերգութեան միջոցին և թէ այլ կարեւոր դէպքերում, որը մենք «Խաչակնը» ևս ենք անուանում:

4). «Խնկարկելը», որ Հին-Ռէխտից է սկիզբն առել, Քրիստոնէական Եկեղեցումն էլ է գործածւում: Ա. պատ-

կերների և թէ ս. Աւետարանի ու ս. Միւռոնի առաջ խնկարկելը՝ դէպի նոցա ունեցած մեր յարգանքն է ցոյց տալիս, որը բուրվառի մէջ «խունկ» ծխեցնելով է կատարւում:

5). «Մոմ վառելը» առաջ եկաւ նորանից, որ առաջին քրիստոնեաները ստիպուած էին Աստուածպաշտութեան համար երեկոները և գիշելները հաւաքուել։ Դորա գործածութիւնը սկիզբն է առել Հին-Ռւխտի¹⁾ Եկեղեցուց, երբ ցանկանում էին Աստուածպաշտութեան հանդիսին աւելի շքեղութիւն տալ։ Նոյնը և՛ ներկայումս է լինում, երբ հասարակական Աստուածպաշտութիւնը և թէ ս. Խորհուրդները օրցերեկով ևն կատարւում։ Մոմ վառելը, փոխարերական մտքով, մեղ հասկացնում է, որ մենք, «լոյս հաւատի» հետևողներ և լոյսի չօր որդիք լինելով, պէտք է մեր միտքը «Քրիստոնէական ծշմարտութեան Լուսով»²⁾ լուսաւորենք։

6). Զանգակ խփելը Քրիստոնէական Եկեղեցու սովորութիւնն է եղել։ Զանգակները տեղաւորւում են առանձին «Զանգակատներում», կամ թէ Եկեղեցու գլխին։ Զանգակից առաջ, ինչ ժամանակներում, «Կոշնակ» էր գործածում, որը մի փայտէ կամ երկաթէ տախտակ էր, ու

¹⁾ Ելից 40։

²⁾ Առաջը ամենակարեսր տարրերից մէկն է։ Առանց լոյսի և կրակի ամեն ինչ մեռած է, ամեն ինչ սառն է, ամեն ինչ անպատճ է և ամեն ինչ խաւար։ Սրեի լոյսը թէև շրջապատով ասարկաները տեսնելուն օգնում է, բայց միենուն ժամանակ էլ մեղ հաճելի տաքութիւն, կեանք և ուրախութիւն է պատճառում։ Ինչ նշանակութիւն ունի լոյսը զգալական աշխարհի մէջ, նոյն նշանակութիւնն ունի Քրիստոս և՛ «հոգեսր» աշխարհում։ Սոյլ պատճառը Սուրբ Գիրքը, Յիսուսին պատկերացնելով, թէ՞ նա ի՞նչ էր և ի՞նչ էլ լինելու է աշխարհիս վերայ, Դորան մարդկութեան ռջմարդունու։ Էնքը՞ Տէրը՝ շատ անդամ՝ նրան „աշխարհի կոյս էր անուանում, նրան հետևողներին՝ կոյսի որդիք«, իսկ նր թշնամիներին՝ „խաւարի մարդիկ«։

րին փոքրիկ ձողով խփում էին և հաւատացեալներին ժամ հրաւիրում, փողոցէ փողոց շրջելով Հետեապէս՝ զանգակները նորա համար են գործածուում, որ-1)¹⁾ հաւատացեալները Աստուածպաշտութեան «Հրաւիրուին», 2)²⁾ տաճարի մէջ կատարուած Աստուածպաշտութեան «Ամենաշկարեւոր» մասերը յայտնուին և՛ 3)³⁾ Եկեղեցական հանդիսին մեծ «շքեղութիւն» տրուի։

ԱՄՑՈՒԱԾՊԱՇՏՈՒԹԵԱՆ Ս. ԳՐՔԵՐԸ.

ՆՈՅԱ. ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԾԱԳՈՒՄԸ։

Այս գրքերը, որոնց համեմատ մեր ս. Եկեղեցին Աստուածպաշտութեան կարգն է կատարում, — «Աստուածպաշտութեան գրքեր» են կոչւում⁴⁾։

Աստուածպաշտութեան գրքերը հետևեալներն են-1)¹⁾ Աւետարանը, 2)²⁾ Ժամագիրքը, 3)³⁾ Նարականը, 4)⁴⁾ Ճաշոցը, 5)⁵⁾ Խորհրդատետը, 6)⁶⁾ Տաղարանը, 7)⁷⁾ Տօնացոյցը, 8)⁸⁾ Մաշտոցը, 9)⁹⁾ Կանոնագիրքը և՛ 10)¹⁰⁾ Յայսմաւուրքը։

— 1)¹⁾ «Աւետարանը» իւր մէջ Քրիստոսի ամբողջ «Երկրային կեանքն» է պարունակում. գրել են՝ Մատթէոս,

Նահօթ. *) Սոքա լովորն էլ գրուած են ընտիր Հայկական՝ Գրաբար՝ լեզուով, որին կարող էր ներկայ ժողովրդական աշխարհիկ հասկանալի լեզուով, որին կարող էր ներկայ ժողովրդական աշխարհիկ հասկանալի լեզուով, որին կարող էր ներկայ ժողովրդական աշխարհիկ հասկանալի լեզուով, որ մենք, զայիրս, շատ տեղ ցրուած լինելով և շատ էլ Հայ-բարբառներ ունենալով, զրաբարը Եկեղեցական ասպարիզում մի տեսակ՝ կապող և միացնող՝ ընդհանուր լեզու ևնք ընդունում. թէ՝ գործածերու համար աշխարհաբարը այն պէս կոկուած և կանոնաւորուած չէ, ինչպէս գրաբարը, որ հրաշալի կերպով կոկուած և կանոնաւորուած չէ, ինչպէս գրաբարը, իրեն աշխարհաբար լեզուի հիմք և վերջիպով է մշակուած. գ)՝ գրաբարը, իրեն աշխարհաբար լեզուի հիմք և վերջիպով է մշակուած. գ)՝ գրաբարը, պէտք է իսր գոյութիւնը պահպանէ և՛ զ)՝ նիս մշակման միակ աղբիւր, պէտք է իսր գոյութիւնը պահպանէ և՛ զ)՝ այնքան էլ գրաբարը անմատչելի չէ, ինչպէս կարծում է. մեր մշտական անդամ էլ գրաբարը անմատչելի չէ, ինչպէս կարծում է. մեր մշտական անդամնաշանաւոր գործածական ս. Գրքերը՝ համեմատաբար՝ աւելի պարզ և հասկանալի լեզուով են գրուած։

Մարկոս, Ղուկաս և Յովհաննէս Աւետարանիչները^{*)}: Աւետարանը Հայերէն թարգմանեցին հինգերորդ դարում ու ու Սահակ և Մեսրովը թարգմանիչները (410 թ.): Թարգմանութիւնը շատ ճիշտ է, ընտիր է և գեղեցիկ, այնպէս որ սա բոլոր լեզուներով կատարած թարգմանութիւնների թագումի է կոչվում:

— 2)[†] «Ժամագիրը», որի մէջ օրուայ Աստուածպաշտութեան կարգերը «ժամերի» է բաժանած, —աղօթքներ, երգեր և ընթերցուածներ է պարունակում: Ժամագիրը գրել են ո. Սահակ և ո. Մեսրովը թարգմանիչները: Ճշխացրել են՝ Դիւտ, Յովհան Մանդակոնի և Ներսէս Շնորհալի հայրապետները:

— 3)[‡] «Շարականը» իւր մէջ բովանդակում է այն բոլոր հոգեսոր իմաստալի և շնորհաբուղիս երգերը, որոնք եւ կեղեցիներում երգուիլ, որոնց «մի մասի» սկզբնաւորութեան հետքն առաջին 4 դարումն է եղել՝ միայն «յոյն և ասորի» լեզուներով: Մնացածները մեր ազգային շնորհալի ո. հայրեն են կազմել և լրացրել, որոնց մէջ դարձեալ առաջին տեղն են բռնում ո. Սահակն ու ո. Մեսրովը: Դոքա բոլոր շարականները, երգելու համար, «ուժ ձայնի» են բաժանել:

— 4)[§] «Ծաշոցը» իւր մէջ պարունակում է «Սուրբ Գրքից» առնուած ընթերցուածները, որոնք օրերի վերայ են բաժանած: դոցա եկեղեցումն երեսը դէպի ժողովուրդը դարձրած են կարգում, այն էլ «գրակալի» վերայ:

*) Խանօթ, Մատթէոսը իւր Աւետարանը զրեց՝ Քրիստոսի Համբարձումից—8, Մարկոսը—15, Ղուկասը—17 և Յովհաննէսը—53 տարի յետու:

«Ա. Գիրքը», որ «Աստուածաշունչ» և է կոչւում, որպէս Աստծու ննջի, այսինքն՝ Ա. Հոգու՝ ազգեցութեամբ գրուած, երկու մասն ունի՝ Հին-Ուկսու և Նոր-Ուկսու: Առաջինը բաղկացած է 47 գրքից, որոնց մարգարէներն են գրել, ամենից շատ՝ Մովսէսը. երկրորդը երկու մասից է կազմուած, որոնցից առաջինը՝ Աւետարանն է (բարութեան և փրկութեան աւետիսը), իսկ երկրորդը՝ «Դործք Առաքելոցը» և առաքեալների գրած զանազան «Ծղթերը», որտեղ պատմուած են թէ Քրիստոնէութեան տարածութիլը և թէ առաքեալների տուած խրատները, յորդորները և պատուէրները, ևս և՛ եղած անցքերը. դոցա բոլորը գրած են իրանք-առաքեալները: Ամբողջ «Նոր-Ուկսու» 27 գիրք ունի:

Որովհեաև «Աստուածաշունչը» իւր մէջն է պարունակում Աստծու հետ կապած ուխտը—դաշը, տուած խոստումը—«կտակը» և պատգամները, այդ պատճառով նա «կտակարան» էլ է կոչւում:

Թէ Հին-Կտակարանը և թէ Նորը մաքի կողմանէ չորս մասի են բաժանուած—1)[†] «Մարգարէական», ասլագայի համար գուշակութիւններ անելով, 2)[‡] «Պատմական», —եղած անցքերը արձանագրելով, 3)[§] «Բարոյական», —յորդորներ և խրատներ առալով, և 4)^{||} «Օրէնսդրական», —օրէնքներ և պատուէրներ առաջարկելով: Եկեղեցում Հին-Կտակարանից կարդում են միայն «միջանի» ընտիրը մարգարէների գրուածքները: Եշանաւոր տեղ են բռնում և «Սաղմոնները», որոնց մէջ Սաղմոներդու Դաւիթը Աստծու առաջ իւր ամբողջ հոգին, ուրախութիւնները և տիրութիւններն է բացանուած, իւր գործած մեղքերը զգջում, Աստծու անվերջ կատարելութիւնները փառաբանուած, Նորա արած զթութեան և բարերարութեան համար «Հորհակալութիւն» մատուցանում և, սկսած բոլոր բարի գործերը զլուխ ըերելու համար, Նորանից «օգնութիւն» խնդրում: Նոր-Կտակարանից էլ կարգացում են ամբողջ 4 աւետարանը, Առաքեալների գործերը և թղթերը:

Այդ գիրքը «Ծաշոց» են անուանում այն պատճառով,

որ դորան, մեծ մասամբ, «ճաշու ժամասացութեան» միշտ ջոցին են կարդում: Հին և նոր կտակարանի կարդալու գեղեցիկ սովորութիւնը առաքեալների՝ ժամանակից է սկսուել:

— 5) «Խորհրդատերը» իւր մէջ բովանդակում է ամբողջ «Պատարագը»: Այս Խորհրդատերի սկզբնական ձևը Տիրոջ եղբայր ս. Յակովըն է յօրինել, որը և՛ Երրուսալէմի ու Կեսարիայի Եկեղեցիներին է անցել: Վերջինիս Եկեղեցուց է վերցրել ս. Պատարագի արարողութիւնը և՛ մեր ս. Գրիգոր Լուսաւորիչը, որը յետոյ Ս. Սահակ, Մեսրովը և Յովհան Մանդակունի հայրապետները ճոխացրին:

— 6) «Ծաղարանում» կան պատարագի ժամանակ երգելու՝ տաղեր, երգեր, քարոզներ և շարականներ:

— 7) «Ծոնացոյցը» մի այնպիսի «ուղեցոյց» է, որի մէջ մանրամասն զետեղուած են Եկեղեցու ամեն օրուայ տօները, երգելու շարականները, երգերը, սաղմոսները, ընթերցուածները և այն ամենը, ինչոր կարեոր է օրուան յատուկ ժամերգութեան համար: Դորա սկիզբը զրեց մեր ս. Գրիգոր Լուսաւորիչը, Որից յետոյ կանոնաւոր կազմակերպեցին և գեղեցիկ կերպով ճոխացրին, զանազան ժամանակներում, Ս. Ս. Սահակ, Մեսրովը, Գիւտ, Յովհան Մանդակունի, Ներսէս Շնորհալի և Մեծագործ Սիմէօն Նշանաւոր կաթուղիկուները:

— 8) «Մաշտոցը» իւր մէջ պարունակում է մեր Եկեղեցու ամբողջ «Խորհուրդները» և հոգեոր «Ժէսերը» կատարելու բոլոր «կարգերը», որի պատճառով նա «Ժիսարան» էլ է կոչւում: Ծիսարանը Հայերէն թարգմանեց և կարգի դրեց Վ դարում ս. Միսրովը, որի համար իւր երկրորդ անունով «Մաշտոց» կոչուեցաւ: Ծիսարանը Քրիստոնէութեան առաջին դարերից գոյութիւն

ունի, որը գրուած է եղել Յոյն և Ասորի լեզուներով: Երկու տեսակ Ծիսարան կայ մեր Եկեղեցում, որոնցից մէկը «Ձեռաց-Մաշտոց» է կոչւում, իսկ միւսը՝ «Մայր-Մաշտոց»: Առաջինում պարունակում են՝ մկրտութեան, պատկի, ննջեցեալների թաղման, աղօրէնէքի, խաչալուայի, տնօրէնէքի և ուրիշ օրինակատարութիւնների, իսկ երկրորդում՝ Եկեղեցու հիմնարկութեան և օծման, հոգեոր բոլոր պաշտօնեանների ձեռնադրութեան և թաղման, ս. Միւսոնի օրհնութեան և ուրիշ հոգեոր պիտոյքներ կատարելու՝ «կարգերը»:

— 9) «Կանոնագիրը» իւր մէջն է ամփոփում Նիշկիայի, Կոստանդնուպոլսի և Եփեսոսի մեր Եկեղեցու ընդունած երեք Տիեզերական, ևս և մեր Եկեղեցական—Ազգային ժողովների մէջ մշակած «Կանոնները», որոնք կազմուած են մեր Եկեղեցու թէ կառավարութեան և թէ բարեզարգութեան համար: Մեր Եկեղեցին դոցանով է հրահանգուել և այժմս էլ ամենայն ճշուաթեամբ հրահանգ լում է, միշտ խուսափելով այն բոլոր օտարամուտ այլանդակ նորաձևութիւններից, որոնք մեր «Ազգային Եկեղեցու ոգուն և գոյութեանը խորթ են եղել և վտանգաւոր:

Ազգային ժողովներում մշակուած կանոնները և կարգադրութիւնները յիշելով՝ չի կարելի այստեղ չ'յիշել և Մովսէս Եղիվարդեցի հմուտ տօմարագէտ կաթուղիկոսին, որ Դուին քաղաքում 551 թուին ժողով կազմեց, ուղեց Հայոց տօմարի սխալները և Ազգային Տարեգրութեան հիմք զրեց, հրահանգ տալով՝ իրանից յետոյ «Հայոց Տարին» գտնելու համար՝ «յիշեալ թիւր Քրիստոսի Ծննդեան թուականից հանել», իսկ Քրիստոնէականն էլ որոշելիս՝ «551 թուին Ազգայինը աւելացնել»:

— 10) «Յայսմատրը» բոլոր սրբերի կենսագրու-

թիւններն է պարունակում իւր մէջ, որոնց, մինչև 19-րդ դարի վերջերը, մեր Եկեղեցումն՝ «իւրաքանչիւր օր», երեւկոյեան ժամերգութիւնից առաջ էին կարդում, որից էլ իւր «անունը» ստացաւ։ Ս. մարդոց կենսագրութիւնները և թէ արած ընտիր գործերը կարդալու լաւսովորութիւնը առաքեալների ժամանակից է մտել, որպէսզի լսողները հետեւն սրբերի ընտիր գործերին եւ առաքինի կեանքին։

Յայսմաւուրքը գրուած է եղել յոյն և ասորի լեզուներով, միայն տասնումէկ—երորդ դարում Հայերէն է թարգմանել Գրիգոր Վկայասէր կաթուղիկոսը, որից յետոյ դորա մէջ զանազան ժամանակներում շատ փոփոխութիւններ եղան մեր Եկեղեցու հայրերի կողմից։

Ա. Ռ. Ա. Զ. Ի Ն Մ Ա Ս Ո Ղ Ը

ՀԱՍՏԱՐԱԿԱՆ ԱՍՏՈՒԱԾՊԱՇՏՈՒԹԻՒՆ,

ՕՐԱԿԱՆ ՃԱՄԱԿԱՐԳՈՒԹԵԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ։

Մովսէսը՝ աշխարհիս «Ստեղծագործութիւնը» նկարագրելիս՝ «օրը երեկոյեանից» է հաշւում։ Մեր Քրիստոնէական Եկեղեցումն էլ օրը՝ դորա նման՝ նոյնպէս «երեկոյեանից» է սկսւում։ Հին-ժամանակ սահմանուած էր օրական ինն անգամ աղօթք անել, բայց՝ որովհետեւ այդ շատ դժուարին էր և շատ անգամ՝ անհնարին, այդ պատճառով՝ մի ժամանակ կարգադրուեցաւ օրական միայն երեք անգամ ժողովուիլ՝ «երեկոյեան, առաւօտեան եւ ճաշուայ» ժամերգութիւններին, որի համար մնացած վեց կարգը արդէն դոցա հետ միացրին։ Եւ, որովհետեւ ամենայն օր՝ ցերեկով՝ թոյլատրուեցաւ պատարագ չ'մատուցանել, այդ պատճառով՝ սահմանուեցաւ հասարակ օրերին միայն «Առաւօտեան» և «Երեկոյեան» ժամերգութիւններ կատարել, իսկ «Մեծ Պատին» ծաշու առանձին որոշուած ժամասացութիւն անել, որի համար կարեոր համարուեց միաժամանակ յարմար հոգեոր երգեր շարականներ և աղօթքներ «կցել», իսկ երեկոյեան էլ՝ բոլորովին «նորերը ասել»։

Բացի վերոյիշեալներից, երբեմն լինում են և՛ դոցա կից առանձին ժամերգութիւններ, որոնք հետեւալներն են—

— 1). Անդաստան,—երբ տեառնազրում են և աշխարհիս չորս կողմը օրհնում. սա ամենասպանչելի կարգն է, որից ընդհանուր եղայրաբութիւն և մարդասիրութեան հոգի է բղխում: Դառնալով «արեելք», —յարատեռութիւն և ապահովութիւն ենք մաղթում Հայոց Հայրապետութեանն, Որը, մեր Ազգի գոյութեան նեցուկ համարուած, Եկեղեցու գլուխ է. «արեմտեան» կողմը՝ օրհնում ենք Խուսաց հզօր Գահը, Որը իւր հովանաւորութեան տակ Խուսատանում ապահով պահում է մեր Եկեղեցին, Ազգը և Հայրապետական ս. Աթոռը. «Հարաւային» կողմը՝ օրհնում ենք արտերը, դաշտերը և նոցա պաղաքերութիւնը. «Հիւսիսային» կողմը՝ օրհնում ենք վանքերը, անապատները, քաղաքները, գիւղերը և նոցա մէջ բնակուած բոլոր ժողովուրդները.

— 2). Թափօր,—երբ երաշտութիւն և վարակիչ հիւսանդութիւններ են լինում և կամ տէրունական նշանաւոր տօներ կատարում իրեւ «պատրաստութիւն» դալիք չարիքների դէմ մաքառելու և կամ, մեղ արած բարիքների պատճառով, Աստծուն չնորհակալութիւն մատուցանելու: Այդպիսի դէսքերում հանդիսաւոր կերպով մէկ տեղից միւս տեղն են գնում և այնտեղ «անդաստան» կատարում.

— 3). Նախատօնակ, —երբ տէրունական և կամ նշանաւոր սրբերի տօն է լինում առաջիկայ օրը, որի համար երեկոյեան առանձին նշանակուած շարականների մի մասն է երգում, որոնց ամբողջութիւնը լրանում է միայն հետեւալ առաւօտ.

— 4). Հակումն, —սա միայն տէրունական տօների նախընթաց զիշերն է կատարում, հրաւիրելով հաւատացեալներին արթուն և աշխայժ մնալ. այդ պատճառով՝ երբ Ազգին, կամ Եկեղեցուն, մի որեւ վտանգ է սպառնում, —այն ժամանակ հսկումն են կատարում և Ազգի ու Եկեղեցու հարազատ զաւակներին արտապնդութեան և անձնութիւնը հրաւիրում:

Պ Ա Տ Ա Ր Ա Գ :

Քրիստոնէական Եկեղեցու ամենանշանաւոր Աստուածաշտառութիւնը Պատարագն է, Որի մէջ է կատարում

ս. Հաղորդութեան Խորհուրդը: «Պատարագ» բառը Ասորերէն է և նշանակում է «Զրհ», որի Առարկան մեր Տէրթիսուս: Քրիստոնէան է: Հաղորդութեան Խորհուրդը: Հիմնեց Ենքը՝ Փրկիչը: Սւականութիւնութիւն երեկոյեան, իւր մահից առաջ, «Խորհրդաւոր Ընթրիքի ժամանակ՝ «բաղարջ հացը» վերցրեց, կտոր՝ կտոր արեց, աշակերտներին բաժանեց և ասաց —«Առէք-կերէք, Սա իմ Մարմինն է». յետոյ վերցրեց մի բաժակ գինի, տուեց աշակերտներին և ասաց —«Ամենքդ իմեցէք Սորանից, որովհետեւ Սա է նորութիւնը Արինը, Որը ձեր եւ շատերի մեղքերի թողովթեան համար է թափում». վերէլ աւելացրեց —«Սորանինձ յիշելու համար՝ կատարեցէք»: Հաղորդութեան Խորհուրդը Յիսուսի հաստատեցնորա համար, որ— 1)՝ միշտ իւր կարար Մահը մտաքերուի, 2)՝ Աստծու և իւր հետեւողների մէջ նոր ուխտ հաստատուի և 3)՝ հաւատացեալները աւելի սերտ կապով միանան իւր հետ և յաւիտենական կեանք ստանալուն ձգտին: «Գործք Առաքելոց» զրքից երկում է, որ առաքեալները, հաւատացեալների հետ միասին, ամենայն օր հաւաքուելիս են եղել ս. Հաղորդութեան Խորհուրդը կատարելու: Հարկաւ, այդ գլուխ բերելու համար, նոքա նախապէս կազմած կ'ունենային թէ դորա ձեր և թէ կարգը, որ յետոյ իրանց հետեւողներին իրեւ «առանգութիւն» յանձնեն: Պատարագի «առաջին կազմութիւնը» Տիրոջ եղբայր Յակովը Առաքեալին է վերագրում, որի ձեր Քրիստոնէական բոլոր Եկեղեցիներին անցաւ: Պատարագի թէ կարգը, թէ աղօթքները և թէ միւս ծէսերը՝ սկզբում Քրիստոսի հետեւողներին «բանաւոր» էն հաղորդում, որովհետև հեթանոսներից Երկիւլ էն կրում, որ նոքա իրանց Աստուածաշտառութեան զաւակները չ'իմանան և ծաղրի չ'ենթարկեն: Բայց, երբ 11 դարում Քրիստոնէութիւնը Հռովմէական կայսրութեան մէջ իւր յաղթութիւնը տարաւ, այն ժամանակից սկսած՝

նշանաւոր եկեղեցական ս. հայրերը միայն բանաւոր ձեզ
«գրաւորի» դարձրին և լրացրին:

Պատարագ ամենայն օր կարելի է մատուցանել, բացի
«Մեծ և Առաջաւորաց» պատերի հասարակ օրերից. այդ
միջոցներին թուլատրելի է պատարագ մատուցանել միայն
«շաբաթ և կիւրակի» օրերը: Մի օրուայ մէջ միևնուն անձը
իրաւունք ունի միայն մի պատարագ անել: Քրիստոսի
վերջին «Ընթրիքի» օրինակի նման՝ առաքեալների ժամա-
նակ պատարագը սկսում էր երեկոյեան և վերջանում
կէս-գիշերն *) անց. բայց, երբ Տրայանոս կայսեր հրա-
մանով արգելուեցաւ գիշերները ամեն տեսակ ժողովներ
տնել, այդ ժամանակից քրիստոնեաները սկսեցին պատա-
րագի համար հաւաքուիլ միայն արեծագից առաջ: Զոր-
րորդ դարից սկսած՝ կարգադրուէցաւ պատարագը «օր-ցե-
րեկով» մատուցանել, այն էլ կէս օրից ոչ—ուշ. այդպէս
է կատարում և՛ ներկայ ժամանակս. միայն «Ծննդեան և
Յարութեան» ձրագալոյց պատարագներն են «արել մայր
մտնելուց» սկսում:

Պատարագ մատուցանել կարող են՝ քահանաները,
վարդապետները, եպիսկոպոսները և հայրապետները:

Պատարագը պէտք է մատուցուի միայն այն եկեղե-
ցում կամ մատուում, որտեղ օծած վէմքար կայ: Քրիս-
տոնեաները I—III դարերում չաղորդութեան ս. Խորհուր-
դը կատարում էին միայն այն գետնայրերում (կատակոմբ-
ներում) **), որտեղ մարտիրոսների գերեզմաններ կային:
Երբ, չորրորդ դարից սկսած, քրիստոնեաներին հնարաւոր

*) Գործ Առաքելոց—207:

Ծանօթ. **) Կատակոմբները այնպիսի գետնայրեր են, որոնք երկար
և անկանոն անցքեր ունին, որոնցից շատերը լաճախ միմեանց կարում են:
Քրիստոնեաները այդ կատակոմբներում էին թաղում իրանց մեսածներին
և մարտիրոսներին, որոնցից վերջիններին գերեզմանների վերալ էլ հա-
ղորդութեան ս. Խոր՝ուրդն էին կատարում:

եղաւ բաց տեղերում եկեղեցիներ շինել, այն ժամանակ
Նոքա զանազան կողմերից սկսեցին այդ տաճարները ս.
մարտիրոսների մասունքները տանել: Բայց, որովհետեւ ան-
հնարին էր իւրաքանչիւր եկեղեցում ամբողջ մասունքները
ունենալ, այդ պատճառով՝ նոքա «մասերն» էին բերել տա-
լիս և վերան պատարագ մատուցանում: Մեր ս. եկեղե-
ցին, միայն սրբերի գերեզմանների վերայ պատարագ ա-
նելու հին սովորութեան յիշատակը պահպանելունպատա-
կով, «անշարժ», կ ս. Միւռոնով օծած՝ խաչաղարդ «Վէւ-
րարի» գործածութիւնն ընդունեց: Հնումն, առանձին անօ-
թով, ցանկալի սրբի մասունքները թաղում էին նորաշէն
եկեղեցու վէմքարի տակ. թաղում էին «մասունք» և
եկեղեցու «սիւների» հիմքում:

Պատարագը երեք մասն ունի—1)՝ «Նուիրաբերու-
թիւն» կամ Պատրաստութիւն, 2)՝ Պատարագ «Երեխանե-
րի» և 3)՝ Պատարագ «Հաւատացեալների»:

ՆՈՒԻՐԱԲԵՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ:

Այս մասումն է պատրաստում ս. Խորհրդի համար
հարկաւոր լինելիք նիւթը: «Նուիրաբերութիւն» այն պատ-
ճառով է կոչում, որ հին քրիստոնեաները, եկեղեցի գա-
լով, իրանց հետ բերում էին հաց, գինի, ձեթ և ուրիշ
կարեղը բաներ: Բերածներից ջոկում էին միայն նոցա,
որոնք հարկաւորում էին ս. Խորհրդին, իսկ մնացածը
պահում էին «Սիւնյ Ընթրիքի» համար, որը հին ժամա-
պահներում, ամեն մի պատարագ վերջանալուց յետոյ, գաւ-
նակներում, ապա կազմում (տրապէզ): Երբ որ այդ ընթրիքները
թում էին կազմում տրապէզ, արգելուեցան չորրորդ դարի կի-
վերջացան, (ժողովները արգելուեցան չորրորդ դարի կի-
վերջացան), իսկ ընդհանրութեան բերածների էլ կարիք չ'զգաց-
ուից), իսկ ընդհանրութեան բերածների էլ կարիք չ'զգաց-

Հոգակ: Ա. պատարագի համար հարկաւոր է—1)՝ մաքուր ցորենի ալիւրից, անխմնը և կլոր «տիպարով» պատրաստած, նշխարք, որի վերայ փորագրած է լինում Քրիստոսի տնօրէնութիւններից յատկապէս խաչելութիւնը, և 2)՝ անապակ զինի, որ երբէք մէջը ջուր չ'պէտք է խառնած լինի:

Պատարագիչ պաշտօնեան, այդ բոլորը պատրաստելով,
աջակողմեան խորանն է մտնում և այնտեղ զգեստաւոր-
ւում. զգեստաւորուելուց յետոյ Ատեան է գուրս գալիս,
լուացւում, ժողովրդի առաջ կանգնում և իւր մեղքերի
համար թողութիւն խնդրում, աջակողմեան սանդուղով
թեմ բարձրանում և ապա, վարագոյրը քաշած, սպասը
գնում, այսինքն՝ նշանարքը մաղմայի վերայ բազմեցնում,
գինին սկիհը ածում և ապա՝ քողով ծածկում. սորանից յե-
տոյ, խնկարկելով, վարագոյրը բացած, կրկին աջ սան-
դուղով ցած է գալիս և ժողովրդի միջով ու ձախա-
կողմեան սանդուղով թեմը բարձրանում և ո. Սեղանի ա-
ռաջ կանգնում։ Այս շրջելը «Աշխարհ գալ» է կոչվում,
հասկացնելով, որ Քրիստոս աշխարհ է իջել մարդկային
ազգի փրկութեան համար։ Սորանով վերջանում է «Նուի-
րաբերութեան շրջանը»։

ՊԱՏԱՐԱԳ ԵՐԵԿԵՎԵՐԻ:

Երկրորդ մասը այդպէս է կոչւում այն պատճառով, որ գորա ժամանակ՝ հնումն՝ կարող էին ներկայ լինիլ և «Երեխաներն» ու իրանց մեղքերը «քաւող» քրիստոնեաները, որոնք արգելուած էին, իրանց ծանր մեղքերի պատճառով, ո. Հաղորդութիւն ընդունելուց: «Երեխաներ» էլ կոչւում էին այն մարդիկ, որոնք Քրիստոնէութիւն էին ընդունել, բայց գեռ ևս «չէին մկրտուել»: Պատարագի

այս մասում յիշեալ մարդիկ հաւատացեալներից ջոկւում
էին և գաւիթ մանում այն ժամանակ, երբ սարկաւագը
երգում էր—«Ոչ ոք երեխաներից եւ թերահաստներից այս
լուրիրդին չմօտենայ»:

Երեխաների պատարագը սկսում է Ս. Երրորդովնեան
փառաբանովթիւնով, որի ժամանակ առևում է—«Օքնուած
է չօր, Որոյու եւ Սուրբ Հոգոյ թագաւորովթիւնը»: Երգում
է այստեղ «Երեքսրբեան» երգը. կարդացւում են՝ մար-
դարձական և առաքելական գրքերը, ևս և Աւետարանը.
Վերջինից յետոյ մեր Հայաստանեայց Եկեղեցու «Դաւա-
նութիւնն» է առևում, որը «Հաւատի հանգանակ» է կոչ-
ուում, որի ժամանակ հաւատացեալները, «Երկու ձեռքի ափե-
ւում», որի ժամանակ հաւատացեալները, «Երկու ձեռքի ափե-
ւում միացնելով», իրանց «Սէրն ու Հաւատն» են արտա-
րը միացնելով», իրանց «Սէրն ու Հաւատն» են արտա-
րը յայտում դէպի իրանց դաւանութեան «բոլոր մաքերը»:

Հաւատի հանգանակ—«Հաւատամըլ» մի այսպիսի
սքանչելի հիւսուածք է, որի մէջ «համառօտ, բայց ամփոփ,
մեր ամբողջ զաւանովթիմն է դրս բերած», որպիսին
կազմուեցաւ Նիկիայի Տիեզերական ժողովում, իսկ վերջ-
նականապէս էլ մշակուեցաւ և հաստատուեցաւ Կոստանդ-
նոպօլսի և Եփեսոսի դարձեալ Տիեզերական ^{*)} ժողով-
ներում:

ՊԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱԽԱՏԱՑԵԱԼՆԵՐԻ:

Պատարագի երրորդ մասը «Հաւատացեալների» պատարագ է կոչւում, որովհետև գորա ժամանակ ներկայ լի-

Կելու իրաւունք է արւում «միայն հաւատացեալներին», այսինքն՝ մկրտուածներին և Եկեղեցուց չբանազրուածներին:

Այս մասը չորս բաժնից է բաղկացած.—

Ա). Առաջինը սկսւում է «Մեծ Վերաբերումնվ», որի ժամանակ սարկաւագը, կամ քահանան, ս. Խորհրդի Ընծաները Խորհրդանոցից կամ Ընծայարանից, ձախ դռնով, տանում—բազմեցնում է ս. Սեղանի վերայ, հասկացնելով, որ Քրիստոսը ծնուեց, մարդ դարձաւ և մարդկութեանն էլ ընծայուեցաւ՝ իրանց փրկութեան համար:

«Մեծ Վերաբերումնից» անմիջապէս յետոյ՝ սարկաւագը, իբրև աւետարեր հրեշտակ, իջնում է Ատեան և Ներքեում յայտնում գալրապետին, կամ քահանային, —սա էլ ժողովրդին՝ Քրիստոսի Ծնունդը, ասելով— «Ողջոյն ձեզ,

տոսի «Յնութեան» վերաբերեալ կազմած դաւանաբանական հիմքերը խախտեցին. իրանց «գերիշխանութիւնը կամեցան տիրապետող դարձնելը» և միւս եկեղեցիները իրանց «հալատակեցնել», որոնց թւում են Մերը, Որը միշտ պարզ և ժողովրդական ազատ ողի է ունեցել, հեռի ամեն տեսակ բռնի և այլանդակ արտաքին ոտնձգութիւններից: Մերայինները, նախապէս իմանալով այս ժողովի տրամադրութիւնը, «ժողորովն չկամեցան մասնակցել»:

Մեր ընդունած ժողովների համառօտ պատմութիւնն էլ այս է—
—1). Առաջին Տիեզերական ժողովը եղաւ 325 թ. Նիկայում, որտեղ հաւաքռուեցան 318 հայրապետ. մեր կողմից մասնակցեց միայն ս. Գրիգոր Լուսաւորչի որդի Արիստակէսը». ժողովի պատճառն էր Աղեքսանդրիայի Արիստուածը, որ Քրիստոսին Աստծու Որդի և Ա. Երրորդութեան էլ Երկրորդ Անձը չէր բնդունում: Քրիստոնեաների մէջ այդ կողմանէ սարսափելի խոռվութիւն ծագեց, կոստանդիանոս Մեծի հրամանով կազմել տուած վերոյիշեալ ժողովը մերժեց Արիստ մոլորդութիւնները: Այդտեղ կազմուեցան¹⁾ Հաւատի Հանգանակ և Հաւատամքը, և²⁾ միքանի Եկեղեցական կա-

—Քրիստոսը մեր մէջ յայտնուեց», որի պատասխանը լինում է,— «Օրհնուի Տիեզեց յայտնութիւնը»: Այս գէպում միմեանց ողջոյն են տալիս և երգում, յորդորելով— «իրար սիրել, հաշտ ապրել և խաղաղ կեանք վարել», Հնումն միմեանց համբուրում էին, բայց յետոյ, մեր վարքն ու միմեանց համբուրում էին, բայց յետոյ, մեր վարքն ու բարքը փոխուելով, գա էլ փոխուեցաւ, և սկսեցին ուսերը համբուրել. վերջը՝ դորա տեղն էլ այժմեան երեք անգամ «Գուլս տալը» բռնեց:

— Բ). «Ողջոյնից» յետոյ ս. Ընծաների «վերջնական պատրաստութիւնը» կամ «սրբագործութիւնն» է կատար դում, որի համար պատարագիչը խնդրում է Հօրը, Որւում և Սուրբ Հոգուն, որ «հացն ու գինին» Քրիստոսի ձամարիտ Մարմինը և Արիւնը դառնան: Հէսց այս շրջաձամարիտ Մարմինը և Արիւնը դառնան: Հորը այս շրջաձամարիտ նումն է, որ քահանան, նշխարքը երկու ձեռքում բռնած, նումն է,

նոններ (20), որոնցով պէտք է ամեն մի քրիստոնեայ, այդ ժամանութեայ կրօնական «խառնակ» դրսութեան միջոցին, հրահանգուեր. նակուայ կրօնական «խառնակ» դրսութեան միջոցին, հրահանգուեր. նոններ (20), որոնցով պէտք է ամեն մի քրիստոնեայ, այդ ժամանութեայ կրօնական «խառնակ» դրսութեան միջոցին, հրահանգուեր. նոններ (20), որոնցով պէտք է ամեն մի քրիստոնեայ, այդ ժամանութեայ կրօնական «խառնակ» դրսութեան միջոցին, հրահանգուեր. նոններ (20), որոնցով պէտք է ամեն մի քրիստոնեայ, այդ ժամանութեայ կրօնական «խառնակ» դրսութեան միջոցին, հրահանգուեր. նոններ (20), որոնցով պէտք է ամեն մի քրիստոնեայ, այդ ժամանութեայ կրօնական «խառնակ» դրսութեան միջոցին, հրահանգուեր. նոններ (20), որոնցով պէտք է ամեն մի քրիստոնեայ, այդ ժամանութեայ կրօնական «խառնակ» դրսութեան միջոցին, հրահանգուեր. նոններ (20), որոնցով պէտք է ամեն մի քրիստոնեայ, այդ ժամանութեայ կրօնական «խառնակ» դրսութեան միջոցին, հրահանգուեր. նոններ (20), որոնցով պէտք է ամեն մի քրիստոնեայ, այդ ժամանութեայ կրօնական «խառնակ» դրսութեան միջոցին, հրահանգուեր. նոններ (20), որոնցով պէտք է ամեն մի քրիստոնեայ, այդ ժամանութեայ կրօնական «խառնակ» դրսութեան միջոցին, հրահանգուեր. նոններ (20), որոնցով պէտք է ամեն մի քրիստոնեայ, այդ ժամանութեայ կրօնական «խառնակ» դրսութեան միջոցին, հրահանգուեր. նոններ (20), որոնցով պէտք է ամեն մի քրիստոնեայ, այդ ժամանութեայ կրօնական «խառնակ» դրսութեան միջոցին, հրահանգուեր. նոններ (20), որոնցով պէտք է ամեն մի քրիստոնեայ, այդ ժամանութեայ կրօնական «խառնակ» դրսութեան միջոցին, հրահանգուեր.

— 2). Երկրորդ Տիեզերական ժողովը կայցաւ 381 թ. Կոստանդնուպօլսում, Թէսուկոս Մեծ կայսեր հրամանով, 150 հայրապետուաննուպօլսում, մեզանից Մեծն Ներսէսն էր մասնակցել, որը տի Ներկայութեամբ. մեզանից Մեծն Ներսէսն էր մասնակցել, որը Միջերկրական ժողովի կողիներից մէկի աքսորների կողմից, քշուել էր, այդ տուք, Աքիսոսի հետեւող Յունաց կայսրների կողմից, քշուել էր, այդ տուք, Աքիսոսի հետեւող Յունաց կայսրների կողմից, ապա Հայրապետուան առաջարկութիւններից աղայիկան թագաւորին իւր հօր գահը նստեցնելու: Ժողովի պատճառն էր Կոստանդնուպօլսի Յոյն Մակեդոն» պատրիարքը, որ ս. Հոգուն Երրորդութեան Երրորդ Անձը չէր ընդունում. ժողովը սորա

Քրիստոսի «Խորհրդաւոր Ընթրիքի» ժամանակ տուածպատուէրներն է կրկնում և բարձր ձայնով ասում—«Առէք, կերէք, Սա Իմ Մարմինս է». յետոյ վերջնում է սկիհը՝ գինով, և ասում—«Ամենքդ Սորանից խմեցէք, ուրովհետև Սա է Իմ Նորմւիստի Արիւնը, Որ ձեր և շատերի մեղքերի քաւութեան և թողութեան համար է թափւում»:

Սորանից յետոյ, Սեղանի աջ կողմը, յիշատակւում են՝

մտքերն ևս մերժեց:

—3). Երրորդ Տիեզերական ժողովը եղաւ Եփեսոսում 431 թուին, 200 հայրապետի մասնակցութեամբ. պատճառն էր Կոստանդնուպօլսի Յոյն «Նեստոր» պատրիարքը, ընդունելով Աստծու Որդի Յիսուսին ուրիշ անձն, իսկ Կուսից Ծնածին իրեւ լոկ մարդ, որի պատճառով էլ ա. Կուսին համարում էր «մարդածին» և ոչ թէ «Աստուածածին»։ Ժողովը Նեստորի կարծիքները նոյնպէս հերքեց։ Մեղանից այսուեղ ոչ ոք չկար. միայն այդ ժամանակ Կաթոլիկոս էր ա. Սահակ Պարթևը. Սա, Ազգային ժողով կազմելով, ընդունեց Եփեսոսի ժողովի որոշումները։

Եյսուեղ աւելորդ չի լինի և «Հաւատամըին» համառօտ բացատրութիւնը առաջ բերել։ Հաւատամքը «չորս» մեծ մասն ունի, որոնցից առաջինը վերաբերում է Հօրը, երկրորդը՝ Որդուն, երրորդը՝ ա. Հոգուն, իսկ չորրորդը՝ Եկեղեցուն, Որը մարդուս փրկութեան համար սահմանած Խորհուրդների Մատակարարողն է և «Դաւանութեան» անսխալ Վարդապետողն ու Ռւսուցանողը։

Առաջին մասից քաղած ճշմարտութիւնները սոքա են—1) Աստուած կայ և մի է. 2)՝ Աստուած մի է, բայց երեք Անձն ունի (Հայր, Որդի և Սուրբ Հոգի), այսինքն՝ մի Աստուածութեան մէջ՝ երեք Անձն, և երեք Անձնաց մէջ՝ մի Աստուածութիւն, —մէկ խօսքով՝ Երրորդութիւն. 3)՝ Ս. Երրորդութեան Առաջին Անձը՝ Հայր Աստուածն է. 4)՝ այս Երեքսրբեան Արարիչ-Աստուածն է վեց օրում ստեղծել երկինքը և երկիրը և նոցա միջի երեացող և աներեսյթ արարածները, որի համար, միւս «Կատարելութիւնների» (յատկութիւնների) հետ միասին, «Ամենակալ» է կոչւում, իրեւ ամեն բան իւր զօրութեան մէջ Պարունակող։

Քրիստոնէական Եկեղեցու «սրբերն ու Հայոց Եկեղեցու նշանաւոր նահատակները և հայրապետները», որ մենք էլ նոցանից սիրու առնենք եւ նոցա շաղով գնանք Սեղանի ձախ կողմն էլ կեանք և ասողութիւն է խնդրուում բոլոր կենդանի մնացածներիս համար—մեծից մինչև փոքրը, իշխանաւորից մինչև ռամիկը. ինդրուում է բոլոր աշխարհի, ևս և Եկեղեցու՝ համար սէր և խաղաղութիւն, նոյնպէս և գերի գնացած, կամ նեղութեան մէջ մաշւող՝ եղբայրնե-

Տիեզերքն էլ Աստուած վեց օրում ստեղծեց - առաջին օրը՝ լոյսը—(գիշեր և ցերեկ), երկրորդ օրը՝ երկինքը, երրորդ օրը՝ ջուրը ցամաքից բաժանեց, չորրորդ օրը՝ արեգակը, լուսինը և աստղերը ստեղծեց, հինգերորդ օրը՝ թուշոնները և ձկները, վեցերորդ օրը՝ բոլոր կինդանիները և ապա՝ մարդուն (Աղամին ու Եւային):

Երկրորդ մասը ամբողջովին նուիրուած է Յիսուս-Քրիստոսին, Որի յատկութիւնները հետեւեաններն են—1)՝ Նա Երրորդութեան երկրորդ Անձն է. 2)՝ աշխարհիս երեսին Նորան անուանեցին Յիսուս (Փրկիչ) և Քրիստոս կամ Մեսոփա (Աստծուց Օծուած). 3)՝ «Միածին» է համարուում, որովհետեւ Հօր՝ էութիւնից է, այսինքն՝ Աստուած է. 4)՝ Հօրից այնպէս է ծնուամ, ինչպէս լոյսը՝ լուսից. 5)՝ Նա ծշմարիտ Աստուած է և ծշմարիտ Աստծուց էլ ծնուած և ոչ թէ ստեղծուած. 6)՝ Հօր հետ մի էութիւն ունի և մասնակից էլ է այն ամեն ստեղծագործութեան, որպիսին Հօրից է ծագել։

Բացի յիշեալ յատկութիւններից՝ ընդունում ենք, որ Նա, մարդկային ազգի փրկութեան համար, երկնքից իջաւ, մարմին ստացաւ, մարդ դարձաւ, Սուրբ Հոգու զօրութեամբ Ս. Կուսից կատարեալ կերպով ծնուեց, «ճշմարտապէս» մարմին, հոգի և միաք առաւ և այն ամենը ունեցաւ, ինչ որ մարդուս մէջ կայ. Հարչարուեց, խաչուեց, թաղուեց, երեք օրից յետոյ յարութիւն առաւ, երկինք համբարձաւ և Հօր աջ կողմը նստեց. պէտք է նոյն մարմնով և Հօր փառքով գայ՝ կենդանի մնացածներին դատաստան անելու և անվերջ թագաւորութիւն հիմնելու։

Յիսուս-Քրիստոսը Իւր աշխարհային Կեանքում մարգարէի, քահանայի և թագաւորի պաշտօն կատարեց. 1)՝ Մարգարէի պաշտօնը ցոյց տուեց նորանով, որ քարոզեց, թէ՝ Աստուած ամեն մինին՝

ըին աղատութիւն, որին հետեւում է խորիմաստ «Տէրունական» «Հայր Մերը»:

— 9). Յետոյ տեմնուում է Շաշակման՝ պատրաստութիւնը, որի ժամանակ, վայրագոյրը ծածկած, սքանչելի «Տէրողորմեաներն» են երգուում, որոնք իրանց մէջ՝ սիրոյ, միութեան և Ազգի ու Եկեղեցու գոյութեան խնդրուածներ են պարունակուում, իսկ պատարագիչը վերցնուում է նշանաբար, չորս կտոր անուում, մէկով ինքը ճաշակւում,

իւր գործի համեմատ՝ անշուշտ կ'վարձատրէ. 2)՝ Քահանայինը նորանով, որ ինքը մարդկային ազգի փրկութեան համար Խաչի վերայ իւր Անձը զոհ բերաւ (պատարագ մատուցեց) և Աստծու ու մարդկանց միջնորդը եղաւ, և 3)՝ Թագաւորինն էլ նորանով, որ մեր Եկեղեցու և մեր սրբերի Տէրն ու Թագաւորը գարձաւ և մեզ էլ այնպիսի օրէնքներ տուեց, որ մենք նոցա միջոցով ազնիւ, առաքինի և անարատ կեանք կարողանանք քաշել այս աշխարհում:

Երրորդ մասը Ս. Հոգուն է նուիրուած, որտեղ պարզ յայտնուում է, որ՝ 1)՝ Ս. Հոգին Երրորդութեան Երրորդ Անձն է, 2)՝ առեղծուած չէ. 3)՝ կատարեալ է և ոչ մի պակասութիւն չ'ունի, ցոյց տալով, որ ինքն էլ Հօր և Որդու նման կատարեալ Աստծուած է և թէ՝ Դոցա բոլոր կատարելութիւններն էլ ունի. 4)՝ Իւր չնորդքը և զօրութիւնը ցոյց տուեց օրէնքների, մարդարէութիւնների և աւետարանների մէջ, որոնք Նորա ազգեցութեամբ են զրուած. 5)՝ «Հօրից բղիւց» (Յովհ. 15: 26), Յորդանան գետի վերայ իջաւ և յայտնեց, որ Յիսուս-Քրիստոսն է Աստծուց Ուղարկուածը—Առաքեալը և 6)՝ սուբր մարդոց մէջ բնակուեց, հասկացնելով, որ նոցա արած գործերն էլ ո. Հոգու ազգեցութեամբ են լինում:

Չորրորդ մասը իւր մէջն է ամփոփում Եկեղեցին: Քրիստոնէական Եկեղեցին՝ իւր էութեամբ՝ երկու տեսակ է լինում. մէկը կոչւում է յաղթանակողների, իսկ միւսը՝ զինուրիաների Եկեղեցի. առաջինի մէջ մտնում են՝ հրեշտակները և հանգուցեալները, իսկ երկրորդի մէջ՝ ներկայ կենդանի մնացած հաւատացեալները, որոնք զինուած են Սուրբ Հոգու վէնքով՝ աշխարհքիս փորձութիւններին դիմադրելու նպատակով: Զինուորեալ Եկեղեցին էլ ունի իւր—1)՝ Ուսուցանողները, այսինքն՝ առաքեալները, աւետարանիչները, վար-

իսկ մնացած երեքով արժանաւոր ցանկացողներին ճաշակում. եթէ վերջիններս չեն լինում, այն ժամանակ ամբողջն էլ ինքն է ընդունում:

— 9). Ամենից վերջը՝ դպիրները «Գոհացողական» երգեր են երգում, իսկ քահանան իմաստալի «Որ օրհնես» աղօթքը ասում և Աստծու օրհնութիւնը խնդրում Եկեղեցու թէ ներկայ և թէ բացակայ եղող բոլոր անդամների համար, որից յետոյ ճախակողմեան սանդուղով Բեմից իջնում է Ատեան, «Յովհաննու Աւետարանից» առաջին գլուխը կարգում—Քրիստոսի—1)՝ «Նախայափեան Ծընդդեան, 2)՝ Աստուածութեան և 3)՝ Երկրային Գործունէութեան» մասին, և, ապա, ժողովրդին արձակում:

Արձակելու ժամանակ ժողովրդին «Բարձրառնեմ» նըշխարքից մասեր են բաժանում, որոնք՝ մէկ կողմից, այն «Սիրոյ Տրապէզը» (հացկերոյթն) են յիշեցնում, որը՝ հնու-

դապետները և քահանաները, և 2)՝ Ուսանողները, որոնք նորանեալողներն են համարում: Քրիստոնէական Եկեղեցին՝ Հանդանակում անուանում է—1)՝ մի, որովհետեւ խական Եկեղեցին մէկն է, որը մի Դլուխ ունի (Յիսուս-Քրիստոսը), Որի հետ բոլորս միացած ենք մի Հաւատով, մի Յուրը, որովհետեւ նարած ազնիւնքներով, ազնիւ և մաքուր ուսումով, աղօթքով և խորհուրդներով. 3)՝ ընդհանրական, որովհետեւ նորան կարող են հաւատալ ամեն ժամանակի, ամեն ազգութիւնների, ամեն կոշման, և ամեն Երկիրների մարդիկ. 4)՝ առաքելական, որովհետեւ հաստատուած է առաքեալներից:

Ընդունում ենք՝ 1)՝ մի մկրտութիւն (սորան կից և միւս խորհուրդները), 2)՝ ապաշխարութիւն, 3)՝ մեղքերի քաւութիւն և թողութիւն, 4)՝ մեռածների յարութիւն, 5)՝ հոգիների և մարմինների յաւիտենական դաստանան, 6)՝ երկնքի թագաւորութիւն և 7)՝ յաւիտենական կեանք:

Վերջը՝ Հանդանակը նզովում է նոցա, որոնք սխալ կարծիքներ են յայտնում թէ Որդու և թէ Սուրբ Հոգու մասին:

մըն՝ մնացած նուէրներից էր կազմւում, և, ամեն պատառագից յետ, ժողովրդին տրւում,—իսկ, միւս կողմից, հաղորդւողների և չհաղորդւողների մէջ՝ «հոգեոր միութիւն» պահպանում, հասկացնելով, որ մենք բոլորս թէ մարմնով և թէ հոգով մէկ ենք և այսուհետև էլ «մի սիրա և մի հոգի» պէտք է լինինք:

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ:

ՅՈՒԵՐԸ ԵՒ ՆՈՑԱ ՏԵՍԱԿՆԵՐԸ:

Տօնը սահմանուած է Աստծու արած այն «բարիքները մտաբերելու և իբրև օրինակ վերցնելու», որոնց նա տուել է՝ 1)՝ կամ ամբողջ մարդկային սեռին, 2)՝ կամ առանձին հասարակութեանը և 3)՝ կամ՝ Եկեղեցուն, որոնց պատճառով հաւատացեալները իրանց «շնորհակալութիւնն» են յայտնում և Աստծուն «փառաբանում»։ Տօներին ամեն մի քրիստոնեայ պէտք է իւր սովորական օրական գործերը թողնէ և «Աստուածգիտութեան ու Աստուածպաշտութեան» առարկաներով զբաղուի թէ տաճարումն և թէ տանը բացի գորանից, պէտք է առաքինի և բարի գործեր կատարէ և տաճարից գուրս, օրինակ—օգտաւէտ գրքեր կարդալով, հիւանդներին այցելելով, աղքատներին և թշուառներին օգնելով, և այն։ Վերոյիշեալ տօնական հանգստութիւնից կարելի է եզրակացնել այն, որ մենք չ'պէտք է պարապ, կամ անգործ՝ մնանք, որովհետև «պարապութիւնը ամեն չարիքի մայր» է համարւում, իբրև անազնիւ մտքերի եւ տգեղ գործերի աղբիւր։

Հայոց Եկեղեցական տօները լինում են «Անշարժ և Շարժական»։ Անշարժ տօները նոքա են, որոնք «միենոյն ամսին և միենոյն ամսաթուին» են կատարւում. իսկ շարժականները՝ նոքա, որոնք «զանազան» ամիսներում և զանազան ամսաթուերում են տօնւում։

Բացի գորանից՝ տօները լինում են—1) Տէրունական,

2)¹ Աստուածածնի և 3)² Սրբերի (ընդհանուր Քրիստոնէական և Աղքային)։

Ա. ՏԵՐՈՒԽԱԿԱՆ ՑՈՆԵՐ։

Տէրունական տօները նոքա են, որոնք Յիսուս-Քրիստոսի «Երկրաւոր Կեանքի» գէպքերին են վերաբերում, որոնցից նշանաւորները հետեւալներն են։

— 1). Քրիստոսի ծնունդը և Մկրտովթինը³⁾ Յունուարի 6-ն։

I. Ծնունդը. Հռովմայեցոց Օգոստոս կայսեր հրամանով Յովսէփը և ս. Կոյս Մարիամը գնացին իրանց «պապէնական» Բեթղեհէմ՝ քաղաքը՝ «Աշխարհագրական մատենի» մէջ զրուելու. քաղաքումն, իրանց չքաւորութեան պատճառով, զիշերելու տեղ չ'գտան. գնացին գուրու և զիշերը մնացին հովիւների «քարայրում», ուր և՛ ծնաւ մեր Տէր Յիսուս—Քրիստոսը Առաջին անգամ Քրիստոսի Ծնունդը իմացան «հովիւները», որոնց էլ աւետեցին «հրեշտակները»։

II. Մկրտովթինը. Քրիստոսը, 30 տարեկան հասակում, իւր ծնուած ամսաթւում, մկրտուեց Յորդանան գետում. մկրտողն էր Յովհաննէս Մկրտիչը։

Առաջին չորս դարի ընթացքում Հայերը և թէ միւս բոլոր քրիստոնէաները այդ երկու տօնը Յունուարի վեցին էին կատարում. միայն՝ հինգերորդ դարից սկսած՝ միւս ազգերը սկսեցին Քրիստոսի Ծնունդը տօնել Դեկտեմբերի

Դանօթ. *) Մկրտովթեան տօնը կոչումէ և՛ «Աստուածաբարախոնովթեան» տօն, որովհետև Աստուածութեան Ամենասուրբ Երբորդութիւնը՝ ամբողջովին մարդոց մկրտուելու ժամանակի յախանուեց. — „Հայր“ Աստուածը երկնքից առեց—Դա Խմ սիրելի Սրբին է, Գորան լսեցէ՛ք։ Աստծու Մարմնացած Սրբին մկրտուեց, իսկ Սուրբ Հոգին էլ, աղաւու նման, Երկնքից իշաւ։

25-ն, իսկ Մկրտութիւնը դարձեալ Յունուարի 6-ն. մեր Հայոց Եկեղեցին չ'փոխեց իւր Առաքելաւանդ հին հիմնաւոր սովորութիւնը։

Օտարադաւանների փոփոխելու պատճառն էլ այս էր Յանկութիւն յայտնուեցաւ «Մկրտովթեան» հանդէսը կատարել—«Յորդանան» գետի ափում. բայց դա Երուսաղէմից թէ հեռու էր և թէ գնալու համար էլ ժամանակ էր պահանջում. Ուստի Ծնունդը Դեկտ. 25-ն գցեցին, ինչ օր՝ հնումն տօնւում էր և՛ իրանց «Արևի» տօնը, որ թէ այդ «Արևապաշտովթեան» հին մնացորդները արմատահան լինին և թէ ժամանակ էլ վաստակուի Մկրտովթեանը գետի վերայ լինելու,—Յունուարի 6-ն։

Յունուարի 5-ն, «Ճրագալոյցի» երեկոյեան, մեր մէջ հանդիսաւոր պատարագ է լինում, որից յետոյ «Թաթախւամ ենը» ուստիսեղէն կերակուրներով, բայց մսեղէնից, որի պատճառով այս օրը Ծննդեան նաւակատիք է կոչում։

— 2). Յունուարի 13-ն «Տիրոջ Անուանակոչութեան» օրն է, երբ «Յիսուս» անունը դրոշմեցին։

— 3). Փետրուարի 14-ն Տեառն ընդ առաջն է տօնւում. Յիսուսը, 40 տարեկան դառնալով, իբրև ընծայ, Երուսաղէմի Տաճարը տարուեցաւ, ուր Սուրբ Հոգութեամբ Նորան ծերունի Սիմէօնը և մարգարէունի Աննան ճանաչեցին և՛ Նորա աշխարհիս ապագայ «Փրկիչ» լինիլը՝ յայտնեցին։

Հին ժամանակ՝ Հայոց «Արամազգի»⁴⁾ որդի կրակի

Դանօթ. *) Մեր Հոգինը, շատ հին ժամանակներում՝ „կառպաշտ“ էին, որոնց պահանջութեան մէջ Սրամազգը, որ երեք զուստր ունէր Երկնքին մասաւութեան, Աստղիկ՝ գեղեցկութեան և աննէ՞ ասանափինութեան իմաստութեան, Աստղիկ՝ գեղեցկութեան և աննէ՞ ասանափինութեան չաստուածուներ, ևս և մի չաստուած սրղի՝ „Միհր“ անոնով, որ ուխթեան չաստուածուներ, ևս և մի չաստուած սրղի՝ „Միհր“ անոնով, որ ուխթեան ապագանութեան վերայ հոկով և սկսակի էլ տէրն էր համարւում Փաջութեան ափարն էր Վահագն չ'աստուածը, (Աստղիկի ամուսինը), իսկ դիտութեա-

չ'աստուած Միհրի տօնը կատարելու համար՝ տարէնը մի
անգամ հրապարակում մեծ «կրակ» էր վառւում, որի
շուրջը պարում էին և խնդումք Այդ տօնը՝ Փետրուարի
14-ն էր լինում։ Երբ «Տեառն ընդ առաջ» քրիստոնէա-
կան տօնը հաստատուեցաւ, այն ժամանակ հին «Կրակա-
պաշտականը» ոչնչացաւ, թէև մինչև այժմս մեր գիւղա-
ցիների տների առաջ կրակներ են վառւում և մեծ ուրա-
խութիւններ սարքւում, որտեղ կրակի շուրջ պարում են,
թռչկոտում, երգեր ասում և ծխի բարձրանալուց զանա-
զան գուշակութիւններ անում։

— 4). ծաղկազարդ։ Բեթանիա գիւղում չորս օրուայ
մեռած Ղազարոսին յարութիւն տալուց յետոյ, Զատկից
մի շաբաթ առաջ, Յիսուս-Քրիստոսը Խւր վերջին ճանա-
պարհորդութիւնը դէպի Երուսաղէմ արեց։ Հրէայ ժողո-
վուրդը՝ այդ հրաշքով *) մագնիսացած, որն ահագին
բազմութեամբ Եր Եկել «Զատկի» տօնը կա-
տարելու, — Նորան իսկ-թագաւորական ընդունելութիւն
ցոյց տուեց. — Երեխաները իրանց ձեռքերին բռնած ար-
մաւի և ձիթենի ծառերի ճիւղերն օդում ճօճեցին, իսկ
մեծերը, իշով անցնելու ճանապարհին, իրանց շորերը
փուեցին և ամբողջ ժամանակ ամենքը, — «Մեսսիական»
«Ովսաննա» **) ասելով, (որ կ'նշանակէ՝ «Փրկիր, Տէր»)
Նորան փառաբանեցին։

Մեր Եկեղեցու ժամերգութեան միջոցին, մեր ձեռքերում, արմաւի և ձիթենի ծառերի ձիւղերի փոխարէն, «ուռի» ծառի ձիւղեր ենք բռնում, մանաւանդ որ ուռի

թեանը—Տիրը, (Արամազդի պակիրը), որ Գրող էլ էր կռչւու

ნავებ დაგანსხვა აღე დამანაკოւთა ჯატერებ აუგითინ ქწნ მათთვ-
ეანით ა' რაიტებან ათარებანსხერებინ-არებინ, ლისნებინ, კრაქენ, ბათერებინ
ა ალიფ: ზრანე ჰრამავალობა ან ჰიდანა ალე ჰარებერე ჰათარები
ნოჭა იმანებინ აცავანსხერ, ათარებანსხერ (ჰრაქამანსხერ) ა შეძენანსხერა, ამ
ა ფრემერ ის ფრმავებ აუგითინსხანსხერ:

^{*)} 8nqf. 12, 9, 17, 18 ^{**) 8nqf. 117, 25:}

ծառը մեր երկրում ամենից առաջ է տեղեակալում, իսկ
արմավի և ձիթենի ծառ էլ այստեղ չի բումնում:
— 5). Աւագ հինգշաբթի: Բաղարչակերաց ^{**}) տօնի
սկզբում Յիսուսը կամեցաւ զատկական գառը ճաշակել.
ուստի «Վերնատանը» «Եսորհրդատր Ընթրիք» ունեցաւ,
ուր, իբրև սքանչելի «խոնարհութեան և համեստութեան»
օրինակ, աշակերտների ոտքերը լուաց և ս. Պատարագի
Խորհուրդը հաստատեց՝ իւր աշակերտներին «Քաղաք» հաց
և գինի բաշխելով։ Այդ գիշեր Յիսուսը, Ընթրիքից յետոյ,
Գեթսեմանի պարտէզում՝ ճնկաչոք՝ դառնակսկիծ աղօթք
արեց և ապա, «Յուդայից» մատնուելով, Զեռքերը կա-
պած՝ քահանայտեամբ և Պիդատոսի մօտ տարուեցաւ, ուր
և շատ «Հարչարանքնել» կրեց։

Զարչակելուց յետոյ՝ Ասագ ուրբաթ առաւօտ, ժամի
9ն, երկու աւազակների հետ, Գողգոթա սարի գլխին
Հրէաները նորան խաչեցին այն Խաչի վերայ, Որի վերևի
մասում իբրև «մեղադրանք» գրել էին —«Յիսոս Նազով-
րեցի Թագաւոր Հրէից» (Յ. Ն. Թ. Հ.)։

Ասագ ուրբաթ երեկոյ կատարւում է և «Փաղման» հանդէսը: Յիշուսին թաղեցին «Գեթսեմանի» պարտէզում Յովսէփ Արեմաթացին և Նիկողիմոսը, Պիղատոսի թոյլ-տուութեամբ. սոքա երկումն էլ Քրիստոսի ծածուկ աշա-կերտներից էին և Հրէաների «Ծերակլոյտի» անդամներ:

Աւագ հինգշաբթի երեկոյեան՝ «Ոտնալուայի», բազ գիշերն էլ Քրիստոսի կը ած սոսկալի չարչարանքների և մահուան դատապարտուելու յիշատակն (Սուլգն) ենք կատարում։ Ոտնալուային «կարագ» ենք գործածում ի յիշարում։ Ոտնալուային «կարագ» ենք գործածում ի յիշարում։

*) Խանոթ. Այս տօնը, որ մի քանի օր է տևու, զհշառուց հետո կապտուից իրանց դուրս գալու և 40 տարի անապահներում ապրելու ին-
շատակը պահելու համար է սահմանուած, որի միջոցին նոքա ուսելիք-
հացը՝ անխմոր՝ բաղարձակ էին գործածում:

Գլուխը անուշահոտ իւղով օծեց, իւր մեղերը զղջաց և անցկացրած վաս կեանքից հեռանալու և նոր—լաւն էլ ընդունելու խոստում տուեց:

— 6)¹ Զատիկի կամ Քրիստոսի Յարութիւն: Հրէաներն ևս ունէին Զատիկի, որը Պասէք էր կոչում. սա էր Եղիպատոսից դուրս գալու տօնը: «Պասէք» կ'նշանակէ՝ «մօտով անցնել», կամ «ազատել», որի միտքը վերցրած է նորանից, որ, դուրս գալու գիշերը, Հրէաները Եղիպատոսում «մահից ազատուեցան», իսկ կոտորուեցան միայն Եղիպատացոց պնդրանիկ որդիները: Քրիստոսի Յարութիւնը, «երեք օրուայ թաղումից յետոյ», պատահեցաւ Հրէաների Պասէքի տօնին, կիւրակի, ուստի և դա քրիստոնեաների համար «Յարութիւն» կամ «Զատիկ» կոչուեցաւ:

Յիսուսի Յարութիւնը մեր տօների ամենագլխաւոր տօնն է համարւում և մինչև անգամ մի քանի շարժական նշանաւոր տօների ժամանակաշափ ընդունւում: Այս տօնի նախընթաց երեկոյին, շաբաթ, նաւակատիք լինելով, հանգիստաւոր «Ճրագալոյց» — պատարագից յետոյ, թաթախւում ենք «ուտիս» կերակրեղէններով, բացի մսից:

— 7)¹ Համբարձումն: Յիսուս-Քրիստոսը, իւր Յարութիւնից 40 օր յետոյ, աշակերտների հետ Զիթենեաց սարը գնաց և այնտեղ, նոյն խրամներ տալով և Զեռքերը գլխներին տարածելով, օրհնեց ու երկինք համբարձաւ:

— 8)¹ Հոգեգալրատ: Սուրբ հոգին, Որ Յիսուս-Քրիստոսը խոստացաւ տամն օրից յետոյ ուղարկել, առաքեալների վերայ իջաւ Քրիստոսի Յարութեան 50-դ օրը, որի պատճառով այդ տօնը կոչուեցաւ Յիսունք (յիսուն), կամ նոյն նշանակութեամբ՝ Պենտեկոստէ:

Այդ օրը Հրէաները սովորութիւն ունէին իրանց տները և սինագոները ծառերի ճիւղերով և ծաղիկներով զարդարել: Այդ նոքա այն յիշատակի համար էին անում,

որ Աստծու Որէնքը նոցա պապերին արուեցաւ «Սինա» սարից, որը այդ ժամանակ կանաչով և ծաղիկներով էր ծածկուած: Եւ՝ որովհետեւ առաջին քրիստոնեաները Հրէաներից էին, այդ պատճառով՝ նոքա էլ այդ սովորութիւնը նախկին Քրիստոնէական Եկեղեցին մացրին:

— 9)¹ Այլակերպովթիւն կամ «Պայծառակերպովթիւն Տիառն (Վարդավառ): Յիսուս-Քրիստոսը վերցրեց իւր աշակերտներից երեքին՝ Յովհաննիսին, Պետրոսին և Յակովոսին, և գնաց հրաշագարդ «Թափօր» սարը՝ աղօթելու. այնուեղ նա «կերպարանափոխուեց», այսինքն՝ Դէմքը արեի և հանգերձը լուսնի նման լուսաւորուեցան, որի ժամանակ Աստծու ձայնը լսուեց — «Դա է իմ սիրելի Որդին, Դորան լսեցէք»:

Այլակերպովթեան օրը, հնումն, մեր Հայերը ունէին և մի նշանաւոր հեթանոսական տօն, որ Վարդավառ էր կոչւում, իբրև ծաղիկներով և վարդերով զարդարուած օր՝ ի յիշատակ իրանց «Անահիտ» «Ճաստուածուհու», որպիսի սովորութեան նշանն երեւում է նորանից, որներկայումս գիւղացիք շատ տեղ իրանց անասունները ծաղկից շինած փնջերով են զարդարում: Բացի այդ սովորութիւնից՝ այդ օրը միմեանց վերայ ջուր են ցանում և աղաւնի թոցնում, իբրև ջրհեղեղի յիշատակ:

— 10)¹ Գիտ-Խաչ: Մեծն Կոստանդիանոս կայսեր «Հեղինէ» մայրը կամեցաւ Երուսաղէմում կորած ո. Խաչը «գտնել», Որ հեթանոսները, Քրիստոսի հետ խաչուած երկու աւազակի խաչերի հետ, մի տեղ էին թաղել և, հետքը կորցնելու համար, վերան «կոտառն» շինել: Այդ նազտակով Հեղինէ թագուհին 326-ին Երուսաղէմ գնաց և, ինչ մի Յուղա ծերունու պատճելով, Գողգոթայի կուտառունը քանդել տուեց, խաչերը գտաւ, Տիրոջ Խաչը հրաշքով որոշեց և նոր կառուցած «ո. Յարութեան» Եկեղե-

յում նոյնը, խուռն բազմութեան ներկայութեամբ և Եւրուսաղէմի այն ժամանակուայ պատրիարք Մակարիոսի առաջնորդութեամբ, բազմեցրեց Յուլան Էլ, Քրիստոսի Կենոատու Խաչի հրաշագործութիւնից՝ քաջալերուած, քրիստոնէութիւնը ընդունեց, «Կիւրեղ» անունով՝ Երուսաղէմի պատրիարք գարձաւ և վերջը, Յուլիանոս Ուրացողի ժամանակ, նահատակուեցաւ:

Խաչը գտնելու տօնը մեր Եկեղեցին Հոկտեմբեր ամսումն է կատարում:

— 11). Խաչվեց: 614 թուին Պարսից Խոսրով թագաւորը յարձակուեց Երուսաղէմի վերայ և, շատ ուրիշ գանձերի հետ, Տիրոջ Խաչը վերի տարաւ: Բիւզանդական Հերակլէս կայսրը, դորանից 14 տարի յետոյ, Պարսից թագաւորին յաղթեց, փառաւոր խաղաղութեան դաշը կապեց և ս. Խաչը վերադարձնել տուեց: Կայսրը, արքայական թագը և բոլոր վերնաշորերը հանած, հասարակ-պարզ հագուստով, ոտարոբիկ, Ս. Խաչը, ուսի վերայ դրած, ս. «Յարութեան» Տաճարը տարաւ, ուր՝ համբուրելու համար՝ ահազին բազմութիւն եկաւ: Ժողովրդին ցոյց տալու նպատակով՝ Երուսաղէմի այն ժամանակուայ պատրիարք Զաքարիան ս. Խաչը վերացրեց—բարձրացրեց, այսինքն՝ «վերև տարաւ», որի համար Էլ այդ տօնը «Խաչվեց» կոչուեցաւ, որը մեր Եկեղեցին կատարում է Սեպատեմբերի 14-ին, եթէ օրը կիւրակի է, իսկ եթէ՝ հասարակ, այն ժամանակ Եկեղեցական հանդէսը լինում է այդ ամսաթուին մօտիկ եղած կիւրակի օրը:

Տիրոջ Խաչից, ժամանակի ընթացքում, շատ «մասեր» են հանուել և զանազան կողմեր տարուել:

Բ. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՏՕՆԵՐ:

— 1). Ս. Կոյս Մարիամի ծնունդը—8-ն Սեպտեմբերի: Նազարէթ քաղաքի բարեպաշտ Յովակիմից և Աննայից ծնուեց ս. Կոյս Մարիամը:

— 2). Ս. Կոյս Մարիամի երեք տարեկան տաճար տանելը՝ 21-ն Նոյեմբերի: Ս. Կոյսը, երեք տարեկան դառնալով, ծնողների խոստման համեմատ, «Երուսաղէմի» Տաճարը տարուեց և Նորան նուիրուեց: Մնաց այդտեղ մինչև 14 տարեկան հասակը, որի միջոցին, իւր ծնողների մահից յետ, իւր ազգական ծերունի՝ Յովսէփի տուն անցաւ:

— 3). Աւտումն ս. Կոյս Մարիամի—7-ն Ապրիլի: Նազարէթ քաղաքում, Յովսէփի մօտ եղած ժամանակ, ս. Կոյսը Գաբրիէլ Հրեշտակապետից «աւետիք» (ուրախ համբաւ) ստացաւ, որ իրանից է ծնուելու «Յիսուսը» աշխարհի Փրկիչը:

— 4). Վերափոխումն: Քրիստոսի համբառնալուց յետոյ, աւանդութեան համեմատ, 16 տարի Էլ ս. Կոյս Մարիամը Յիսուսի սիրելի աշակերտ Յովհաննիսի մօտ ապրեց: Մահն զգալով Ս. Կոյսը ցանկացաւ իւր Որդու բոլոր աշակերտներին տեսնել, որը և կատարուեց. եկան բոլորը, բացի Բարդուղիմէոսից. մեռաւ Ս. Կոյսը, Որին գիշերով Առաքեալները թաղեցին. Երեք օրից յետոյ եկաւ Քեշերով Առաքեալները Թաղեցին. Երեք մանը տեսնելնկատեցին, Բարդուղիմէոսը և ցանկացաւ Գերեզմանը տեսնելնկատեցին, որ Ս. Կոյս Մարիամի մարմինը չկայ—արդէն վերափոխուել է: Վերափոխման տօնը «Չարժական» է և կատարում է Օգոստոսին: Այդ օրը մեր Եկեղեցին կատարում է և «Խաղողի» օրհնութիւնը:

Գ. ԱԶԳԱՅԻՆ ՍՐԲԵՐԻ ԳԼԽԱԿՈՌ ՏՕՆԵՐԸ:

—1). Հայաստանի Առաջին Հռաւատրիչ Թաղէոս եւ Բարդուղիմէոս Առաքեալները: Հայոց Միջագետքի Աբգար թագաւորը հիւանդացաւ. իւր գեսպաններից լսեց Քրիստոսի արած հրաշագործութիւնները. նամակ գրեց Երուսաղէմ Նորան, որ իւր գեղեցիկ «Եղեսիա» մայրաքաղաքը գոյ՝ միասին ապրելու և իրան բժշկելու. Յիսուսը չ'եկաւ, այլ խոստացաւ՝ իւր Համբարձումից յետոյ՝ աշակերտներից մէկին ուղարկել. Թեսպանների հետ Աբգարը նկարիչ էլ ուղարկեց, որ, Քրիստոսի գալը մերժելու դէպքում, նորա Պատկերը քաշէ. նկարիչը դժուարացաւ Պատկերը հանել. Յիսուսը, ըստ աւանդութեան, սպիտակ կտաւ պահանջեց, իւր ս. Դէմքի վերայ դրեց և այդպիսով իւր Պատկերը ձևակերպեց և դեսպաններին տուեց՝ Աբգարին յանձնելու, որը Անծեռազործ Պատկեր կամ Դաստառակ կոչուեց:

Յիսուսի համբառնալուց յետոյ՝ Թովմաս Առաքեալը իւր Աստուածային Ռւսուցի աշակերտներից, որոնք թուով 72 հոգի էին, Թաղէոսին Աբգարի մօտ ուղարկեց թէ նորան բժշկելու և թէ Քրիստոնէութիւնը տարածելու. Աբգարին Թաղէոսը բժշկեց, Եղեսիայում Քրիստոնէութիւնը տարածեց, Քրիստոսի Ծննդից 34 տարի յետոյ՝ «Առաջին Քրիստոնէական Եկեղեցին» հիմնեց և ապա՝ ինքը—Վերին Հայաստան, Դապաղովկիա եւ Աղուանք իւր Քրիստոնէական Առաքելութիւնը շարունակելու գնաց:

Եկաւ Հայաստան և Բարդուղիմէոս Առաքեալը. Սա ևս տարածեց Քրիստոնէութիւնը:

Մեռաւ Աբգարը. սորա որդի Անանէն և քրոջ զաւակ Սանատրուկը, մէկը մէկից յետ թագաւոր նստելով, Քրիստոնէութիւնը ուրացան, Եկեղեցիները փակեցին, կրատները բացին և քրիստոնեաններին հալածեցին. Սանատրուկը գլխատել տուեց իւր հարազատ դուստր Սանդրիւ-

տին, որ չ'համաձայնեց Քրիստոնէութիւնը ուրանալ. գլխատել տուեց և Սանդրիստի ուսուցիչ Թաղէոսին. մորթեղերծ արեց և Բարդուղիմէոսին՝ Թաղէոսը և Բարդուղիմէոսը կոչուեցան Մեր «Առաջին Հռաւատրիչներ», որովհետեւ սոքա առաջին անգամ Մեր մէջ Քրիստոնէական լոյս տարածեցին և մեզ աշխարհիս երեսին առաջին, ամենահին «Քրիստոնեաններ» անուանուելու իրաւունքը տուին: Թէ Քրիստոնէութիւնը Աբգարից յետոյ յայտնի կերպով հայածուեց, բայց և այնպէս՝ «ծածուկ պահուեց» և մինչև մեր Ա. Գրիգոր Լուսաւորիչը հասաւ, Որը «վերահաստատեց» չորրորդ լարի սկզբին. Մեր Եկեղեցին Թաղէոսի և Բարդուղիմէոսի տօնը կատարում է կամ՝ նոյեմբերի վերջերին և կամ՝ Դեկտեմբերի սկզբներին, որովհետեւ դաշտական տօների հաշւումն է գտնւում:

Միասին կատարում է և Թաղէոս առաքեալի ու Սանդրիստ Կուսի նահատակութեան տօնը՝ ամառը՝ Առանձին յիշատակւում է և Աբգար թագաւորը:

—2). Սուրբ Դրիգոր Լուսաւորիչ: Պարթևազն «Անակ» Եշվանի որդի Դրիգորը ծնուեց Վաղարշապատ մայրաքաղաքում 257 թուին—Քրիստոսից յետ։ Պարսից թագաւորի դրդմամբ, որսի ժամանակ, Անակը վիրաւորեց Հայոց Խոսրովի թագաւորին. սա էլ հրամայեց Անակին սպանել և ըստ թագաւորին. սա էլ հրամայեց Անակին սպանել և նորա ընտանիքը սրի անցկացնել. Գրիգորին ազատեց ծըծմայր Սովիան, որը սորան կեսարիա փախցրեց, ուր մեծացաւ, քրիստոնէական ուսում առաւ, և, ամուսնանալով, ունեցաւ «Վրթանէս» և «Արիստակէս» որդիները. Վերջը ունեցաւ «Վրթանէս» և «Արիստակէս» որդիները. Վերջը կին Մարիամին և Արիստակէս որդուն, իրանց համար կին Մարիամին և Արիստակէս որդուն, իրանց համար ձայնութեամբ, կուսանոց ուղարկեց և ինքը գնաց Մեր Խոսրով թագաւորի որդի Տրդատի մօտ ծառայութեան Խոսրով թագաւորի որդի Տրդատի մօտ ծառայութեան մտաւ, որին Պարսից թագաւորի սրից ազատել էին և մտաւ, որին Պարսից թագաւորի սրից ազատել էին և Հովմ փախցրել։ Տրդատը կարողացաւ իւր անօրինակ քա-

Հութիւններով կայսեր սիրտը դրաւել, Հռովմէական լէ-
գիօններով Պարսիկներից ժառանգական գահը խլել և Հա-
յաստանի թագաւոր նստել:



№ 23. ՍՈՒՐԵԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԽՈՐԵԶ:

Սա, մի անգամ Երզնկա քաղաքի ոսկեձոյլ «Անահիտ»
չաստուածունեւն երկրպագութիւն չ'տալու պատճառով,
Գրիգորին սարսափելի տանջանքներ տուեց և, երբ իմա-
շաւ, որ Գրիգորի հայր Անակն է իւր հօր սպանողը, «Ար-
տաշատի» «Խոր Վիրապը» ձգեց, ուր 15 տարի մնաց, ու-

րին գիշերները, ծածուկ, մի պառաւ կին էր հաց ու ջուր
տանում:

Հռովմայեցոց Դիոկղիտիանոս կայսրից, քրիստոնեա-
ների դէմ հալածանք յարուցանելու ժամանակ, Հռովմից
միքանի տասնեակ կոյսեր փախան և Հայաստան եկան,
մանաւանդ որ կայսրը կոյսերից մէկի, այն է՝ ամենագե-
ղեցիկ թագաւորացն Հռիփսիմէի հետ ամուսնանալ կամե-
ցաւ, միայն թէ վերջինից մերժումն ստացաւ։ Տրդատը,
Դիոկղիտիանոսի իմացնելովն, կոյսերին Վաղարշապատի
հնձաններում գտաւ և ինքն այդ գեղեցկուհու հետ ամուս-
նանալ ցանկացաւ։ միայն թէ այստեղ սա էլ խիստ մեր-
ժումն ստացաւ։ Տրդատը, կատաղելով, հալածանքներից
իրանց զլուխը փրկած 37 հոգի կոյսերին կոտորեց։ — Հռիփ-
սիմէի զլուխը թոցնել, իսկ Սորան սիրտ տուող մայրա-
պետ Գայանէի լեզուն էլ կտրել տուեց։ Մարմինները մնա-
ցին անթաղ։ Տրդատի խիզճը տանջեց, որից խելացնո-
րուեց—հիւանդացաւ և խոզաբար կեանք վարել սկսաւ։
Տրդատի քոյր «Խորովիդիստի» պահանջմամբ, որին Պարսից
թագաւորի կոտորածից պահել էին, թագաւորական գանձերով
միասին, մի բերդում՝ Օտա Ամատունինախարարի հսկողու-
թեամբ, Ս. Գրիգորը Խորվիրապից հանուեց, թագաւորին
բժշկեց—հանգստացրեց, և ապա, 66 օր ծոմապահութիւ-
նից ու քարոզութիւնից յետ, բոլորին 301 թուին Քրիս-
տոնեայ դարձրեց։ Սյդ միջոցներին էր, որ Ս. Գրիգորը՝ նա-
հատակ կոյսերի մարմինները երեք տեղ ամփոփեց և վե-
րաները, Վաղարշապատի մօտ, երեք եկեղեցի շինել տուեց՝
ո. Հռիփսիմէի, Գայանէի և Շողակաթի անուններով, որոնք
մինչև այժմս էլ կանգուն կան։

Ս. Գրիգորը՝ Ազգի հաւանութեամբ՝ «Առաջին Կաթու-
ղիկոսացու» ընտրուեց, և որովհետեւ ձեռնադրելու համար
Հայաստանում եպիսկոպոսներ չ'կային, այդ պատճառով

Կապադովկիայի Կեսարիա քաղաքը գնաց և Ղեռնդ եպիսկոպոսից եպիսկոպոս ու «Հայրապետ» ձեռնալրուեց՝ իբրև մարդէոս և Բարդուղիմէոս Առաքեալների՝ յաջորդ. (պատկ. 23): Ս. Գրիգորը, Կեսարիայից Հայաստան վերադառնալով, Տրդատին ու բոլոր ժողովրդին 302 թուին մղրտեց:

Սուրբ Գրիգորը Երկրորդ Լուսաւորիչ կոչուեց, որովհետեւ մարդէոս և Բարդուղիմէոս առաքեալների Մեր մէջ հաստատած «Քրիստոնէութիւնը Սա վերականգնեց եւ տարածեց»: Ս. Գրիգոր Լուսաւորիչը և Տրդատ թագաւորը սկսեցին Հայաստանում «կռատները քանդել, Քրիստոնէաւ-



№ 24. Ս. Էջմիածնին:

կան եկեղեցիներ շինել և ուսումնարաններ բաց անել»: Խորին ծերութեան մէջ Ս. Գրիգորը վախճանուեց 332 թ. և Նորան աշակերտող Հայերը Նորա «Մասունքները» հաստատեցին գլխաւոր եկեղեցիներում, իսկ նշանաւոր մասը՝ «Կաթոսիկոսարանում»:

Ս. Գրիգոր Լուսաւորիչը երեք տօն ունի—1) Մուտն 'ի Վիրապ, որ տօնւում է միշտ Մեծ Պասի հինգերորդ շաբաթուայ շաբաթ օրը.—2) «Ելն 'ի Վիրապէն», որի տօնը կատարւում է Հոգեգալստից յետոյ՝ առաջին շաբաթուայ շաբաթ օրը, և—3) «Թիստ Նշխարաց», որի տօնը լինում է ամառը Առանձին տօն է կատարւում և Տրդատ թագաւորի համար:

— 3). Ս. Էջմիածնի տօն։ Ս. Գրիգոր Լուսաւորիչը, մի անգամ, Վաղարշապատի մօտ քարոզելիս և աղօթք անելիս, հետեւեալ երկոյթը տեսաւ. նկատեց, որ երկնքից իջնող լուսաւոր Անծը ձեռքի ոսկէ մուրճով գետնին խփեց, որից գետինը գղրդաց, լուսեղէն կամար ձեացաւ և գլխին էլ մի խաչ Երեաց։ Հրեշտակը բացաւարեց, որ իջնողը Միածին Որդին է, և թէ ինքը՝ Ս. Գրիգորը՝ պէտք է «լուսաւորէ, այսինքն՝ Քրիստոնէութիւնը տարածէ, եկեղեցի շինէ, և Հայրապետական Աթոռը հաստատէ»։ Ս. Գրիգոր Լուսաւորիչը 303 թուին այդտեղ մի մեծ սրբատաշ քարէ եկեղեցի շինել տուեց, որը, ըսկզբում, «Կաթոսիկէ» կոչուեց, իսկ յետոյ, ՚ի յիշատակ «Միածին Որդու իշման», «Էջմիածին» անուանուեց. (Պատկ. 24):

Ս. Էջմիածնի հիմքի քարերը դնելիս Ս. Գրիգորն ու Տրդատն էլ աշխատեցին և քրտինք թափեցին։ Ներկայումս այդ վանօը մեր «Հայութեան» «սիրտն է համարւում և հոգին»։ դորա գոյութեան հետ է կապուած եղել և թէ այժմը էլ կապուած է և մեր Հայութեան գոյութիւնը. դա մի զօրեղ Մազնիս է, որ բոլոր Հայերիս սրտերը դէպի իրան է քաշում, Որի յարատեւթեան համար Մեր Եկեղեցում մի շարք «սրտաբուլի» երգեր են երգւում։



№ 25. Ս. Ներսէս Մեծն:

Ս. Էջմիածնի տօնը, փառաւոր հանդիսով, բոլոր Եկե-

ղեցիներում կատարւում է Հոգեգալստից յետոյ – առաջին կիւրակի օրը:

— 4). Մեծն Ներսէս: Զորբորդ դարի ամենանշանաւոր կաթուղիկոս Ներսէս Մեծը Ս. Գրիգոր Լուսաւորչի թոռան թուն էր, Ար Իւր ժամանակին լաւ կրթութիւն էր ստացել Կոստանդնուպոլուսում և Կեսարիայում. Սա մեծ հոչակ հանեց նորանով, որ հիմնեց՝ «Եկեղեցիներ, վանքեր, իջևաններ, աղքատանոցներ, հիւանդանոցներ, ուրիանոցներ (բորոտների բուժարան), ուսումնարաններ», և այլն, այնպէս որ բոլոր այդ տեսակ բարեգործական հաստատութիւնների թիւը հասաւ մինչև 2000-ի, որոնց վերայ կառավարիչ նշանակեց իւր սարկաւագ Խաղունին, որ վերջը եպիսկոպոս և տեղապահ դարձաւ. Ներսէս Մեծը շատ պարզ բնաւորութիւն ունէր.— Նորա համար թագաւորի և տղատի մէջ խարութիւն չ'կար. Նա մի օր թագաւորի մօտ էր ճաշում, երկրորդ օրը աղքատի խրճիթում գտնւում, երրորդ օրը հիւանդին և սպաւորին միսիթարելու գնում: Նա պատուիրեց «վերջացնել» մեռելների վերայ անմիտ «լաց ու կոծ անելը», «սևեր հագնելը» և մերժաւոր ազգականների հետ «պսակուիլը», մանաւանդ որ այդպիսիների սե ունդները՝ շատ անգամ ցեղական դարձած տկարութիւններով էին տառապում:

Ազգը, Սորա անհնման բարիքը տեսնելով, իբրև երախտագիտութիւն, անուանը կցեց «Մեծ» և «Հասարակաց Հայր» տիտղոսը: Բացի սորանից՝ ազգասիրական գդացմունքները զարթնելով և զարգանալով՝ Սորա ժամանակ,



№ 26. Ս. ՍՍՀԱԿ-ԹԱՐԳՄԱՆԻՑ:

ընդհանուր հաւանութեամբ, որոշուեց—1) «Կաթողիկոս ամենայն Հայոց» տիտղոսին աւելացնել և «Ճայրագոյն Պատրիարք» բառերը և 2)՝ Հայոց կաթուղիկոսներին օծել միայն Ս. Էջմիածնում Հայ եպիսկոպոսների ծեղորդ. (պատ. 25):

Ներսէս Մեծը կաթուղիկոսութիւն արեց 365-ից մինչև 384 թուականը:

Ներսէս Մեծի տօնը կատարւում է՝ Հոգեգալստից յետոյ՝ երկրորդ շաբաթուայ շաբաթ՝ օրը:

— 5). Սուլը Սահակ և սուլը Մեսրովը Թարգմանիչները:

Մինչև հինգերորդ դարի սկիզբը Աստուածաշտութեան գրքերը, Հայկական տառեր չ'լինելու պատճառով, Ասորերէն և Յունարէն էին. Ժողովուրդը ոչինչ չէր հասկանում. Խիստ ցանկութիւն յայտնուեցաւ բոլոր Աստուածաշտութիւնը «Հայրենի» հասկանալի լեզուով լսել. այդ գործին ձեռնամուխ եղան մեր Ս. Սահակ և Ս. Մեսրովը հայրերը:



№ 27. Ս. ՄԵՍՐՈՎԸ ԹԱՐԳՄԱՆԻՑ:

սումնասէր Արշակունի Վոամշապուհ թագաւորի ժամանակը, Վոամշապուհի «Քարտուղար» էր Մեսրովը, (պատկ. 27), որ դարձեալ լաւ կրթութիւն էր ստացել, ինչպէս և Ս. Սահակը Սա, կուսակրօն գառնալով, անձամբ տեսաւ ժողովրդի անտանելի դրութիւնը՝ անհասկանալի լեզուով Աս-

տուածպաշտութեան կարգը Մեր Եկեղեցում կատարելու ժամանակ. Սա «Հայոց տառերը» գտնելու մտադրութիւնը յայտնեց Ս. Սահակին, ժողով եղաւ թագաւորի մօտ, թագաւորը յայտնեց Դանիէլ եպիսկոպոսի մօտ Հայոց «Ին տառեր» մինիլը. բերել տուին դոցա, միայն անյարմարութիւններ գտան, ինքը՝ Մեարովբը՝ գնաց Միջազնաքարի կողմերը և դիմեց շատ իմաստուն մարդոց. վերջը՝ Աստուածային Շնորհքով՝ մեր տառերը 406 թ. դտաւ և Սոզոմոնի «Առակներն ու Նոր-Կտակարանը» թարգմանեց Մեր գրականութեան «պաշտպան» (մեկնաս) Վռամշապուհ թագաւորի, կաթողիկոսի և ժողովրդի կողմից նորան փառաւոր ընդունելութիւն եղաւ Հայոց «Վաղարշապատ» մայրաքաղաքում:

Այստեղ Ս. Սահակը և Ս. Մեսրովբը սկսեցին «Աստուածաշունչը» և միւս սուրբ Գրքերը Ասորերէնից և Յունարէնից «Հայերէն թարգմանել, ուսումնարաններ բաց անել և նոր այբբենով ուսում տարածել»: Հայոց ուսումնարաններում լաւ սովորած ընդունակ աշակերտներին ուղարկեցին Բիւզանդիոն (Կոստանդնուպոլիս), Աթէնք, Աղէքսանդրիա, Եղիսիա եւ Կեսարիա՝ իրանց ուսումը Յունական բարձրագոյն կրթութեամբ լրացնելու։ Այդպիսով՝ ընտիր մատենագիրներ դուրս եկան և Մեր «գրականութիւնը» ծաղկած դրութեան հասցրին հինգերորդ դարում, որի պատճառով այդ դարը «Ոսկէ Դար» կոչուեցաւ։

Ս. Թարգմանիչները երկարդ աշակերտներ ունեցան, որոնք «աւագ և կրտսեր թարգմանիչներ» կոչուեցան, Աւագ թարգմանիչներից նշանաւոր եղան—1) Յովհան Եկեղեցացին և Յովուէլ Պաղնացին, որոնք, Ս. Մեսրովբի հետ Միջազնեաքում երկար դեգերելուց և տառերը գտնելուց յետ, Ս. Գրքի թարգմանութեան «առաջին մշակները» հանդիսացան. 2) Կորինը, որ Ս. Սահակի հրամանով վրաց եպիսկոպոս եղաւ և Ս. Մեսրովբի վարքը գրեց. 3) Եղիկ Եղիկացին, որ «Եղծ աղանդոց» նշանաւոր գիրքը կազմեց, որով Պարսից կրօնը դատափետեց և նորա բուն էութիւնը գեղեցիկ կեր-

պով պատկերացրեց. առ յայտնի է լեզուի յստակութեամբ և բազմակողմանի հմտութեամբ։

Իրուսմբ թարգմանիչներից էլ նշանաւորները սոքա հանդիսացան—

1) Մովսէս Խորենացին, Ս. Մեսրովբի քրոջ որդին, որ գրեց իւր հոչակաւոր «Հայոց Պատմութիւնը» հին դարուց սկսած մինչև Արշակունեաց թագաւորութեան վերջանալը՝ և արժանացաւ հայ պատմագիրների «հայր» կոչուելուն (պատկ. 28). առ բացի դրանից՝ ունի և՛ ուրիշ ընտիր գրուածները. 2) Դաւիթիթը, որ իւր փիփոխական գրուածներով նշանաւոր եղաւ և «Անյաղթ» պատուանը ստացաւ. 3) Մամբրէն, Մովսէս Խորենացու փոքր եղայրը, որ իւր ժամանակի պատմութիւնը և զանազան էլ ճառեր գրեց. 4) Եղիշէն, որ արձանագրեց սքանչելի լեզուի իբրև ականատես, «Վարդան Մամիկոնեանի եւ Հայոց մեծ պատերազմի» մանրամասն պատմութիւնը, ևս և «Ղետնեանց» հոգեորականների նահատակութիւնը. 5) Դազար Փարպեցին, որ կազմեց «Հայոց պատմութիւնը»։



№ 28. Մովսէս Խորենացի։

Ս. Սահակը կաթողիկոսութիւն արեց 390 թուից մինչև 438-ը. Ս. Սահակից յետոյ կաթողիկոսական իշխանութիւնը վարեց և Ս. Մեսրովբը^{**}), միայն վեց ամիս։ Սա լամար յօրինեցին, մեծ համբաւ և հոչակ ստացած ուսումնականներ էին։

*) Խանոթ. Ս. Մեսրովբը գտաւ և՛ վրաց ու Աղուանից տառերը. Մեսրովի տառերը գրացիների մէջ ու Գրքերում են գործածւում (Խուզուրի):

Ներկայումս Սորա գերեզմանի վերայ մի փառաւոր եկեղեցի է շինած, ուր ամեն տարի Հայերից մեծ բազմութիւն է գնում և իւր յարգանքը արտայայտում այդ «Հնաշխարհիկ Ազգային աննման Սրբին»:

Սուրբ թարգմանիչների կրտսեր աշակերտաների շարքում պատուաւոր տեղ են բոնում և՛ Գիւտ (465—475) ու Յովհան Մանդակունի (480—486) կաթուղիկոսները, որոնք իրանց սրբութեամբ, հմտութեամբ և ազնիւ կեանքով մեծ հոչակ ստացան։ Սոցա ժամանակ Պարսիկները, ստիպելով, Հայերից շատերին կրակապաշտ դարձրին, բայց այդ երանելիները սարսափելի դիմագրութիւն ցոյց տուին. — հաւատուրացներին յետ դարձրին, կրակատները քանդեցին և «անձնուարաց» նախարարների ու իշխանների թիւը շատացրին։ Սոքա երկուսն էլ հրաշալի կերպով Մեր «Եկեղեցու ժամանակարգութիւնը ընտիր աղօթքներով, քարոզներով եւ շարականներով նոխացրին»։ Աթոռի «բարեկարգութեան» մէջ էլ մեծ հմտութիւն ցոյց տուին։

— 6). Ս. Վարդանանց զօրավարների եւ Ղետնղեանց հոգեւորականների տօները: Հինգերորդ գարում Պարսից Յաղկերտ Բ. թագաւորը կամեցաւ Հայերին կրակապաշտ գարձնել. մոգերի խորհրդով նամակ գրեց Հայոց հոգեւորականներին և նախարարներին, որի մէջ իրանց կրօնը գովեց, իսկ Քրիստոնէութիւնը պարսաւեց, և վերջը պահանջեց, կամ կրակապաշտութիւնն ընդունել և կամ մի առ մի պատասխաննել: Այդ ժամանակ Կաթողիկոսն էր թարգմանիչների աշակերտ «Յովսէփը»: Աս ժողով արեց Արտաշատ քաղաքում 449 թուին, ուր թագաւորական հրամանի պատասխանը գրեցին, վերջացնելով հետևեալ կտրական խօսքերով—«Մեր հաւատից մեզ ոչ ոք չէ կարող շարժել, ոչ մարդիկ, ոչ հուր և ոչ սուր. Մենք ամեն տանջանք կրօնի և ազգի համար համբերութեամբ կը տանենք»:

Յազկերտը կատաղեց. «Նախարարներին» իւր մօտ
կանչեց և բանտարկեց, բայց վերջը ազատեց, երբ սոքա
«Երեսանց» իրանց համաձայնութիւնը տուին։ Նախարար-
ների մէջ նշանաւորներն էին՝ Վարդան Մամիկոնիանը և
Վասակ Սիւնին։ Դորանից
սիրտ առած՝ Պարսից թագա-
ւորը Հայոց Նախարարներին
մեր Սուրբ Երկիրը ուղարկեց
շատ մոգերով միասին՝ Հայե-
րին «կրակապաշտ»^{۲۰}) դարձնե-
լու. մոգերը թւով 700 հոգի
էին։ Հայերը, լսելով Նախա-
րարների վարմունքը, —թէ
մեծ և թէ փոքր, թէ կին և
